

Լ. ԱՐԱՄՈՒՆԻ

ՅԵՐԳԵՐ

291.99

ԱԿ-83



51 JAN 2009

ՂԱԶԱՆ ՍՐԱՄՈՒՆԻ

19 NOV 2010

391.99

Q-83

*ար*

# Յ Ե Ր Գ Ե Ր

ԲԱՆԱՍԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
Պ Ո Ե Մ Ն Ե Ր  
Բ Ա Լ Լ Ա Դ Ն Ե Ր



---

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1939

21.02.2013

21610




2780  
39

В. АРАМУНИ

П Е С Н И

Гиз Арм. ССР, Ереван, 1939



Յես մի ճամբորդ եմ, սրտով արի,  
Կծկում եմ ուղին իմ դեմ փռված,—  
Ու նվազի տակ իմ յերգերի՝  
Գնում եմ ահա քնար առած:

Ասում ե սիրտս,— դու զինվոր ե՛ս,  
Որերում մեր թեժ՝ դու մարտերի,—  
Կարող ե մի որ դու ել ընկնես,  
Աշխատիր սակայն լինել արի՛:

Այո՛, զինվոր ե՛մ յես հարազատ՝  
Ու հայրենիքի վորդին համառ,  
Յեվ հիմա ուրախ, սրտով ազատ,  
Քս դովքն եմ անում, հայրենի՛ք վառ:

1939



ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Լ Ի Ր Ի Կ Ա Ն

Ե Ե Ս

Գիշերն և հիմա  
Անդորր ու անդորր  
Իջել իմ յերկրին—  
Դաշտերին բուր:

Լուսթյունն և խոր,  
Քնած և քամին—  
Ասաղերն են որոր—  
Ասում աշխարհին:

Ջերմ սիրով անտակ,  
Յեյած այս ժամին,—  
Լույս յերկնքի տակ  
Շրջում եմ հիմի:

Շրջում եմ, հսկում  
Հողը հայրենի,—  
Սիրտս և փոթորկվում  
Ու դառնում արի:

Աչքերս արած  
 Լուսավոր նետեր,  
 Մահմանն եմ հսկում  
 Յես, միշտ աներնր:

Մահմանն եմ հսկում,  
 Վոր չար թշնամին  
 Չմանի յերկրիս  
 Լուսադարդ աշղին:

Ինձ պես հաղարներ,  
 Յեզ հենց նույն ժամին,  
 Յելել, հսկում են  
 Մահմանը կարմիր:

1938



Ն Վ Ե Ր

Յես իմ յերկրին ինչ կարող եմ տալ նվեր,  
 Չունեմ վստիկի՛, չունեմ դո՛հա՛ր թանկագին,—  
 Վո՛չ ազամանդ, վո՛չ ել անմար վառ ջահեր,  
 Վոր կարենամ յես իմ յերկրին տալ նվեր:

Յես իմ յերկրին ինչ կարող եմ տալ նվեր,  
 Ունեմ մի յե՛րգ, ունեմ մի սե՛ր թանկագին,—  
 Ունեմ մի կյա՛նք, ունեմ մի սի՛րտ ու ձեռքեր,  
 Վոր կարող եմ յես իմ յերկրին տալ նվեր:

Յես իմ յերկրին միշտ կարող եմ տալ նվեր  
 Ամբողջ կյա՛նքս ու իմ սի՛րտը անվեհեր,—  
 Յես կարող եմ ասա յերկրին տալ նվեր:

1938



## Ի Մ Հ Ո Ղ Ո Ի Մ

Մի սերմ ընկավ այս հողում  
 Ու ծիլ տվեց, բարձրացավ,—  
 Ծիլն այդ աճեց առանց ցավ  
 Ու դարձավ ծառ շողշողուն:

Բայց քամիները դաժան  
 Աճած ծառին այդ ձկուն,—  
 Առավոտից—իրիկուն  
 Ճնշում էին ամեն ժամ:

Սակայն հողում այդ փափուկ  
 Ծառն արձակեց նոր ճյուղեր,—  
 Տվեց հետո բյուր սերմեր,  
 Վոր աճեցին վոնց մանուկ:

Յես այդ սերմի'ց, այդ հողի'ց  
 Բարձրացա վեր անաղմուկ,—  
 Դւ սրտիս մեջ այս մանուկ  
 Իմ յերգերն են անթախիծ:



## ՅԵՐԳ\_ՅԵՐԵԿՈՅԱՆ

Յերեկոն իջնում է քնքուշ նազով  
 Ու վառում աչքերը իր աղամանդ,  
 Յեվ իջնում է սարից մի ուրախ զով  
 Ու շոյում է կամաց արոտ ու հանդ:

Յեվ յերբ քնում է յերկիրն իմ ջերմ,  
 Յերեկոն է միայն աչքերովն իր  
 Հսկում յերկրին իմ, փռում է սեր  
 Հայրենիքիս վրա վառ ու կարմիր:

Մարմանդ զովն է հետո անուշ իջնում,  
 Վոր հանգիստ քուն բերի մանուկներին.  
 Զովի տակ է անուշ, քաղցր ննջում—  
 Իմ վեհ յերկրի մարգը սրտով արի:





Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1

Առաջնող նման է պարզ աչքերին աղջկա,  
Յերևան իմ, Յերևան, դու թանկագին իմ քաղաք,  
Քո սրաի ու ծոցի մեջ, ինչե՞ր ասես վոր չկան—  
Իմ մանկության այգեստան, Յերևան իմ դու խաղաղ:

Խոխոջունը քո ջրրի կարծես սիրո յերդ լինի,  
Վոր հոսում է լարերից, լարերից թավ ջուրթակի,  
Քո դեղձենին կարմրալուն ասես մանկան թուշ լինի,  
Ողբդ մաքուր— ինչպես պարզ, բյուրեղի պես  
ապակի:

2

Ո՛ր, յես սիրում եմ թե քեզ, թե շենքերդ տուֆաշեն  
Հետո լույսերդ լիմոն և ջինջ, և պարզ և անամպ,  
Հետո դեմքդ քարակերտ ու աներդ լուսաշեն,—  
Յերևան իմ, Յերևան, լցված անախ խնդությամբ:

Վոսկե ստինք արևդ վոնց գուրդուրող մայր լինի,  
Վոր համբույրով է քաշում կանաչ ծիլը դեպի վեր,  
Այդ ծիլի մեջ իմ կյանքն է, վոր աճում է խնդով լի—  
Յերևան իմ, Յերևան, այգեստան իմ բարերեր:



Ա Ե Ն Ա Ն Ա Յ Ի Ն

Քոչա՛ Աւմիկից

1

Աչունը շեկ է, ինչպես դու, քույր իմ,  
Ինչպես մազերդ վոսկուն — վոսկեվարս,  
Քամին քշում է տերեւներին հիմի,  
Սրբում գետինը, ինչպես քնքուշ հարս:

Աչունը կապել է դեղին մի շղարշ,  
Ծառը թափում է թերթերը իրա,—  
Քամին յերգում է խնդության մի մարշ,  
Ծառերի ու մեր աշխարհի վրա:

2

Անձրևը թակում է, դետինը հիմա,  
Ու շնջում է,— աշուն է, աշուն,  
Իսկ մենք վարել ենք հողերը համայն—  
Ու բերքը առաք տարել ենք մեր տուն:

Այսպիսի աշուն չի յեղել յերբեք,  
Յեվ այսքան առատ բամբակի քուլա,—  
Ունեվոր ենք մենք, ունենք առատ բերք—  
Արծաթ անձրեվը վերևից թող լա:



## 3

Պայծառ անուն զույր, զույր իմ ընդշահեր,  
 Ահա ժպտում ե բերքը խաղողի—  
 Պայքարում ենք մենք յելած աներեր  
 Ու հարթում պայծառ, պայծառ մի ուղի:

Թեև անձրև ե, աշունն ե լալիս,  
 Մենք ջրկատներով շարժվում ենք առաջ—  
 Ղեկավարը մեր ցուցմունք ե տալիս  
 Մենք գրոհում ենք անվախ, աննահանջ:

## 4

Այսպիսի աշուն չի յեղել յերբեք,—  
 Ձի յեղել այսքան, այսքան առատ բերք:

1935 թ. Հոկտեմբերյան



## Ա Շ Ն Ա Ն Ա Յ Ի Ն

Աշուն ե, աշուն  
 Յեվ ծառերը մերկ,  
 Յերգում են, խշռում  
 Աշնանային յերգ:

Իսկ արեվը վառ  
 Վոսկեղեն թասից,  
 Ծորում ե դանդաղ  
 Ասդտտում վերից:

Յերբեմն ել քամին,  
 Աշնան պաղ շնչով,—  
 Քչում ե դեղին  
 Տերեվները չոր:

1933



## Ջ Մ Ե Ռ

Յուրտ ե հիմա,  
Ձյուն ե թափվում,  
Մեր դաշտերը  
Ծածկում-ծածկում:

Սահաջն ցրտից  
Ջրերը պաղ,  
Յերգում են դեռ  
Ուրախ-ուրախ:

Ու չեն սառչում  
Ջրերը մեր,—  
Կարկաչում են  
Հորդ առուներ:

Հիմա մենք ել  
Ծիլ ու ծաղիկ,—  
Միշտ ուրախ ենք  
Ու յերջանիկ:

Մենք չենք մրսում,  
Ջուր չի սառչում,—  
Հայրենիքի սերն ե ուրախ  
Միշտ տաք պահում:



## ԳՍՐԵԱՆԱՑԻՆ ԱՌԱՎՈՑ

Գլորվում ե դիչերը  
Խնձորի պես դառնում կես,—  
Հավաքում ե փեչերը  
Գիչերը չար բուխ պես:

Ու առավոտն ե թարթում  
Իր աչքերը կապուտակ,—  
Սարի կատարն ե թառում  
Մի վոսկեթև արեգակ:

Ու իր մաղերն ե հյուսում  
Ինչպես աղջիկը պայծառ,—  
Հետո ցրում մաղերն իր՝  
Մեր դաշտերի մեջ ասծայր:

Գարնան շունչը փչում ե,  
Սևահողն ե բուրում թաց,—  
Վերջին ձյունը հալչում ե,  
Ու սարերից հոսում ցած:



## Ա Շ ՈՒ Ն

Աչուն իմ խղուն,  
Փռել ես դաշտում  
Քո դորդը նախուն...

Ոչչում են ահա  
Յե՛վ թուփ և՛ թե ծառ,—  
Բարձրանում անահ  
Բերքի մի անտառ:

Աչուն, առատ ես  
Մրդերով հասուն,—  
Վոր ժպտում են մեզ  
Քաղցր, սիրասուն:

Աչքերով խաղող  
Աչուն, իմ անուշ,—  
Աչուն, վոսկեչող  
Աչուն, դեղնաթուշ:

1937



Նվիրում եմ իմ բարեկամ սիկին Հայկանուօհն

Վորքան հողատար ե այս մայրը, նայեք.  
Վորքան իմաստուն ե ու վորքան խելոք,—  
Հայրենի սիրով ե լցված, ո՛ր նա ել—  
Ու ապրում ե նա ել հայրենի սիրով:

Իմ մա՛յրն ե, նա մա՛յր ե, այնքան թովչական  
Անրասիր սրտովն իր ու կյանքով անբիծ,—  
Ո՛ր այդպիսի մայրեր իմ յերկրում չատ կան,  
Վորոնք ժպտում են հար, անվիշտ, անթախիծ:

1938



Ս Վ Ի Ն Ի Յ Ե Ր Գ Ը

Վորքան վոր յես սուր եմ զորեղ  
 Խաղաղության այս ջերմ ժամին,—  
 Ավելի քան սուր ու ասեղ  
 Կդառնամ յես կովի պահին:

Յերբ թշնամին ձեռքը մեկնի  
 Մեր հողերին այս սրբադան,—  
 Կխոցեմ յես,— նա լավ գիտի,  
 Սերտը կրա վայրագ դադան:

1937



Ս Ր Ծ Ի Վ

— Յես անգոր եմ,— առաց արծիվն ու լիջավ,  
 Յես չհասա արեղակին այնքան վառ,—  
 Նույնիսկ աչքս ցուրտ բեվեռը չտեսավ,  
 Բնության դեմ չեղա նույնիսկ զիչ համառ:

— Պետք է թռչե՛լ, սակայն թեվերն իմ փետուր  
 Կտանեն ի՞նձ, մինչև վո՛րաեղ, մինչև ո՞ւր,—  
 Սակայն տեսեք, վոր մի արծիվ է ճախրում,—  
 Պողպատ թևով, բարձր յերկնի լազուրում:

— Ո՛ր, վոչ, յերբեք, նա չի լինի բեկբեկուն,  
 Քանի նրան վարում է մի պայծառ սիրտ,—  
 Պայծառ հողին ու մեծ մարդն անբասիր,—  
 Նա կգնա՞, ու կթռչի շատ հեռուն:

Անցավ դարն իմ, արքայությունս ել անցավ,—  
 Քանի դեռ կա պողպատ արծիվն առանց ցավ:

1938

## Հ Պ Ա Ր Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Յես հպարտ եմ իմ յերկրով,  
 իմ մեծ յերկրով արեվառ,—  
 Վոր տանում ե իր նավով  
 Ինձ դեպի ափը պայծառ:

Հպարտ եմ, վոր իմ հողում  
 Ու իմ սրտում ջահելի,  
 Պահում եմ մեծ այն մարդու  
 Վառ անունը՝ Ստալին:

1937

★

## ՆՈՅՆԱՐԵՐՅԱՆ ԱՌԱՎՈՑ

Այս առավոտ բացվեցին  
 Հաղար ծաղիկ ու կակաչ,—  
 Յեվ իմ սիրտը լցրեցին  
 Անուշ յերգեր ու կարկաչ:

Հաղար մանուկ ծնվեցին  
 Առավոտուն արեվոտ,—  
 Հաղար մայրեր ստացին՝  
 — Բարի դալուստ— առավոտ:

Յես ել հենց այդ առավոտ  
 Լեզու առա խոսեցի,—  
 Ու աչքերով իմ հրոտ  
 Անուշ մորս զրկեցի:

Հայրենիքին իմ անգին  
 Յես փարվեցի սիրասուն,—  
 Նա մայրն ե իմ կաթողին,  
 Վոր տվեց ինձ նոր լեզու:

1938

★

Աին աղբյուրը խնդության  
Ստալինն է մեծ,—  
Վոր բոլորիս փառավոր  
Լույս կյանք պարզեաց:

Խնդությունն այդ հոսում է  
Տներն, ամենուր,—  
Ու մեր սրտերը ահա  
Դարձնում է ամուր:

Մանուկները իմ յերկրի,  
Յեզ ամեն մի ձեր,—  
Լովե են ջերմ խնդությամբ  
Լցվել են խինդ բուսեր:

Ո՞վ տվեց այս բոլորը  
Յեզ ո՞վ է տալիս,—  
Առաջնորդը մեր արեզ  
Մեր կյանք Ստալին:



Քաջ ձեռողներ Պապանինի, Երուսի,  
Կեեկեի լեզ ֆեդերատի վերադարձի  
արթիվ:

Իրենց հողու անհուն սիրով  
Ժողովուրդը իմ յերկրի,—  
Ընդունում է Ձեզ ծով սրտով  
— Բարի գալուստ հերոսներին:

Կամքով տոկուն ու հրակեղ  
Մաուլյցների աշխարհն առիք,—  
Մեր սերը ջերմ հոսում է ձեզ  
— Բարի գալուստ հերոսներին:

Դուք վառեցիք հյուսիսում ցուրտ  
Քուրան անշեջ մեր սրտերի,—  
Վոր հար վառվի, միշտ մնա հուր  
— Բարի գալուստ հերոսներին:

Դյուցազնական սրտերը ձեր  
Ստալինը տվեց արի,—  
Ձեր ձեռքերն են վառման ջահեր—  
— Բարի գալուստ հերոսներին:

Ցուրտ բեզեռի զազախում սառ.  
Ձեր անունը ել չի մարի,—

Ե Ն Դ Ո Ի Թ Յ Ո Ւ Ն

Աին աղբյուրը խնդության  
Ստալինն է մեծ,—  
Վոր բոլորին փառավոր  
Կույս կյանք պարգևեց:

Խնդությունն այդ հոսում է  
Տներն, ամենուր,—  
Ու մեր սրտերը ահա  
Դարձնում է ամուր:

Մանուկները իմ յերկրի,  
Յեզ ամեն մի ձեր,—  
Լրվե են ջերմ խնդությամբ  
Լցվել են խինդ բռ սեր:

Ո՞վ ավեց այս բոլորը  
Յեզ ո՞վ է տալիս,—  
Առաջնորդը մեր արեզ  
Մեր կյանք Ստալին:

1938



ՌԱՐԻ ԳԱՂՈՒՍՏ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Քաջ ձեռողներ Պայանինի, Շիրովի,  
Կեեկեի յեզ ֆեդերատիվ վերագործի  
արքիվ:

Իրենց հողու անհուն սիրով  
Ժողովուրդը իմ յերկրի,—  
Ընդունում է Ձեզ ծով սրտով  
— Բարի գալուստ հերոսներին:

Կամքով տոկուն ու հրակեղ  
Սառույցների աշխարհն առիք,—  
Մեր սերը Ձերմ հոսում է ձեզ  
— Բարի գալուստ հերոսներին:

Դուք վառեցիք հյուսիսում ցուրտ  
Քուրան անչեջ մեր սրտերի,—  
Վոր հար վառվի, միշտ մնա հուր  
— Բարի գալուստ հերոսներին:

Դյուցազնական սրտերը ձեր  
Ստալինը ավեց արի,—  
Ձեր ձեռքերն են փառման ջահեր—  
— Բարի գալուստ հերոսներին:

Ցուրտ բեզեռի դադաթում սառ  
Ձեր անունը ել չի մարի,—



Ստալինն և ասում սրայծառ.  
— Բարի գալուստ հերոսներին:

Ստալինի դրոշը մեծ  
Քանի քանի բևեռ կառնի,—  
Ժողովրդի դուք քաջ սաներ:  
— Բարի գալուստ հերոսներին:

Յեվ խնդության այնքան հրկեղ  
Իմ մայր հողում առատ, բերրի,—  
Ժողովուրդն է սպասում ձեզ.  
— Բարի գալուստ հերոսներին:

Յես ել ահա վորպես նվեր  
Իմ այս յերդը յես ձեզ բերի,—  
Ձեզ, իմ յերկրի դյուցազուններ,  
Յառի գալուստ հերոսներին:

1938



## ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

1

Ինչպիսի շնչով, ախ ինչպես յերգեմ  
Մեր յերիտասարդ սերունդի մասին,—  
Ինչպիսի՞ յերգով, ինչպե՞ս պատկերեմ  
Ձինջ ջահելության սրտերն անբասիր:

Ասեմ թե կարմիր վարդն անուշահոտ,  
Վոր ծաղկում է միշտ ուրախ նաղանքով,—  
Դա ջահելության սիրտն է արևոտ,  
Վոր բարախում է քաղցրաձայն յերգով:

Ասեմ թե դարնան առավոտն այս պարզ,  
Վոր բացվում է մեր աշխարհին սրայծառ,—  
Ու բերում իր հետ ջերմ արեվն այս բարի,  
Դա յերիտասարդ սերունդն է մեր վառ:

Ասեմ թե դարնան արեվը այս բարի,  
Ինչպես հասուն նուռ կախվում է վերից,—  
Ձերմությամբ անհուն ու լույսով վարար  
Դա յերիտասարդ սերունդն է նորից:

Բաղեներ, վորոնք սավառնում են դեռ  
Կապույտ յերկնքի անարատ ծովում, —  
Այդ հայրենասեր բաղեների պես  
Մեր յերիտասարդ սերունդն է յեղնում :

Յեվ ի՞նչ ասեմ յես, և ինչպե՞ս յերդեմ  
Մեր յերիտասարդ սերնդի հողին, —  
Ի՞նչպիսի թափով, ի՞նչպես պատկերեմ  
Յելնող այս ուժը հզոր ու անդին :

## 2

Ովկյան է նրանց սրտերն արեվոտ,  
Անհուն է սերը սրտերում նրանց, —  
Ախ, իմ աշխարհի չքնաղ ստավոտ,  
Բացվիր դու կրկին իմ յերդի վրա :

Գարնան անձրեվը հեղեղ է ծնում,  
Թափ առած իջնում լեռների գրկից,  
Ի՞նչ ուժ է յեղնում ու վեր խոյանում, —  
Դա յերիտասարդ սերունդն է նորից :

Ծով սիրտ ու ծով սեր, ծով հողի անդին,  
Ո, ինչքան, ինչքան իմ յերկիրն ունի, —  
Այդ մեր սերունդն է այնքան թանկազին,  
Վոր յեղն մ է մեր — մեզ առն հայրն :

Հորդառատ են մեր դետերը վարար—  
Ցանցել են հողը, — սիրտը յերկրի, —  
Այդ յերակներն են արծաթե ու վառ  
Մեր յերիտասարդ չքնաղ սերնդի :

Արագած սարի մաղերը արծաթ,  
Վոր անարատ են, մաքուր են ընդմիջտ, —  
Մաքուր է այդպես սերունդը անպարտ,  
Վոր չունի սրտում, վոչ ցավ ու վոչ վեջտ :

Յեվ ի՞նչ ասեմ յես, և ի՞նչպես յերդեմ  
Մեր յերիտասարդ սերնդի հողին, —  
Ինչպիսի թափով, ի՞նչպես պատկերեմ  
Յելնող այս ուժը հզոր ու անդին :

Անտառն այս ահեղ կաղնիներով վես,  
Կաղնիներ, վորոնք ապրում են դարեր,  
Հենց մեր սերունդն է, կաղնիների պես,  
Վոր ամրանում է ու կամրանա դեռ :

Մեր յերիտասարդ սերունդն արեկա,  
Վոր խրոխտ յերդով քայլում է անաս, —  
Սրտի մեջ ունի պայծառ արեգակ՝  
Այդ Սասլինն է, վոր միջտ է անմահ :

Ստալինը մեծ, բարձունքն այդ անհատ,  
 Վոր մեծ է, մեծ է, տիեզերքից հոոր,—  
 Մեր կյանքը նրան, վոր մնա անմահ՝  
 Ինքը՝ Ստալինը սերունդն է մեր նոր:

4.

Այո, ամենը, ամենը, վոր կա —  
 Դա յերիտասարդ սերունդն է ներկա:

13-5-38 թ.

Յերեվան

★

## ԲՆՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ

ա.

Գարնան անուշ կանաչ տղան,  
 Ծաղիկներն ել աչքով խաղաղ,  
 Հանդերի մեջ կանչում են խաղ—

Հողով վճիտ

Յերգում են ջինջ —

Հայր Ստալին, մեր ձայնը քեզ

Սրտից մեր կեզ:

բ.

Ծառ ու տերեվ որորվում են  
 Ուրախ նազով շորորվում են,—

Լույսի լույսով վողողվում են

Հով դովի պես

Յերգում են քեզ—

Հայր Ստալին, մեր ձայնը քեզ

Սրտից մեր կեզ:

Գ.

Գետ ու առու լեզու առել,  
Ժիր ու քաղցր մանուկ դառել  
Ու դաշտի մեջ ծիծաղ վառել,

Քեզ դիտում են  
Ու ասում են—  
Հայր Ստալին, մեր ձայնը քեզ  
Սրտից մեր կեզ:

Դ.

Յեզ ամպերը վառ լուսավոր,  
Արծաթ հազանձ միշտ թեվավոր,  
Բարձրանում են ջինջ կամարով,

Որորվում են  
Ու յերզում են—  
Հայր Ստալին, մեր ձայնը քեզ  
Սրտից մեր կեզ

Ե.

Վոսկի աստղերն յերկինն թառած,  
Ջինջ խոհերով անուշ տարված,  
Վառ արեվի լույսով հարրած

Յերբ ննջում են  
Շշնջում են—  
Հայր Ստալին, մեր ձայնը քեզ  
Սրտից մեր կեզ:

Զ.

Վճիտ հոգուս աստղերն ել վառ  
Ու իմ սրտի արեվն անմար,—  
Աշիկներով ջինջ ու պայծառ

Անհուն սիրով  
Յերգ ու տաղով  
Ասում են քեզ— մեր ձայնը քեզ  
Սրտից մեր կեզ:

1938  
Յեռեվան

★

### ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

#### Վախի ա Արամուհուն

Ով ե ասում, վոր միայն վառ մայիսին են բացվում  
Ծաղիկներն իմ յերկրի կարմրաթերթ ու լուսացող —  
Վոր մայիսին են միայն լեզու առնում ու խոսում  
Արծաթաշող ջրերը, արեվի հետ լողացող :

Ով ե ասում, վոր միայն վառ մայիսին են ցողում  
Իմ լազուրաչ յերկնքի հակինթ աչքերը անմար, —  
Վոր մայիսին ե միայն ջրերի ջինջ հայելում,  
Իր հուր մաղերը սանրում արեգակը հրավառ :

Մի՞թե միայն մայիսին ծիլ ե առնում ու ծաղկում  
Մարդու հողու պարտեզի խնդության ծառը վսեմ, —  
Մի՞թե միայն մայիսին սիրո դետն ե հորդանում,  
Վոր սրտերից մեր մաքուր — այնքան առատ ե հոսել :



Վարդ ծաղիկներ են բացվում նոյեմբերյան որերին,  
Արեվի պես հրեղեն, արեվի պես դուրեկան,  
Ծաղիկներն այդ վառվուռն թեվ են առնում որ — որի,  
Իմաստությամբ բարձրանում, — իմ յերկրի մեջ  
ինչքան կան :

Նոյեմբերյան որերի ծաղիկներ ենք մենք անմահ,  
Վոր ծլեցինք վեր յելանք նոյեմբերին լուսերես :  
Թեև ցուրտն իր խստությամբ և՛ դաժան եր,

և՛ անահ

Սեպտյան յելանք բարձրացանք արմալենու ծառի պես :



Կաղնիներ ենք մենք դարձել նոյեմբերյան հուր

շնչից

Յեվ ամրացել ենք արդեն թե յերկնքում, ցամաքում,  
Մեր շարքերը՝ խիտ անտառ, ահա քայլում են նորից  
Յեվ ջինջ ու սլարդ սրտերով մեր սուրբ սահմանը  
հսկում :

Յեվ հիմա ել մեր սրտի սիրո առատ ջրվեժից  
Սերը հոսում ե դեպի իմաստությունն հուրհրան, —  
Վորի ուժով յենում են, ծլում-ծաղկում են նորից,  
Ծաղիկները իմ յերկրի, և՛ ամռանը, և՛ ձմռան...

1937



### ԽԵՋՍԽ ԲԱԶԵՆԵՐԻՆ

Խորհրդային Միության Հեռուներ  
Ձկալովին, Բայրուկովին յեվ Բեյրա-  
կովին

Ո՛վ բազեններ խիլախ, ձեր թոխչքը հատու,  
Վոր կատարվեց անաս, հաղթ ու արի,—  
Ամուր կամքովն եր մեր հերոս ժողովրդի  
Յեվ ուժովը մեր մեծ ղեկավարի:

Ամենուրեք ձեզ հեա,— ձեր թոխչքի պահին,  
Մեր հայր Ստալինը, վորպես զրոշ,  
Ղեկավարը մեր մեծ, այնքան հմուտ անաս  
Նա մղում եր միշտ ձեզ— գեպի զրոհ:

Հաղթանակը դեմքին, ձեզ քաջաբար կոփեց—  
Ձեր յերկաթե կամքը թրծեց բոցում,  
Յերբ ձեր հերոսության հաղթանակը փովեց  
Յեվ աշխարհի վրա և սրտերում:

Յեվ դուք թուշում եյիք: Սակայն հեռուներում  
Հորիզոններ անձիր փորձությունով հղի,  
Իսկ դուք ինչպես բազե առաջ եյիք թեվում  
Բանած հերոսության փառքի ուղին:

Ճանապարհին ղժվար ու խիտ անեղ,  
Չհողնեցիք յերբեք: Ու դեռ անցաք ուղին  
Այնքան ղժվար ու բարդ: Յեվ վոչ մի ան  
Ձկասեցրեց ձեր ջինջ վորոշակի ուղին:

Ո՛վ խտաղեմ մարդիկ, վոր դուք թուք այլտեղ,  
Նոր ճանապարհ բացիք՝ խինդով լեցուն:  
Փառք ուրեմն և ձեզ: Հաղթանակն և նստել  
Ձեր ճակատին ու ձեր մաքուր հոգուն:

1937



## Վ. Ա. Ի. Գ. Ա.

Հայրենիքը քեզ կյանք տվեց,  
Դու աճեցիր ինչպես ծիլ,  
Մայրդ անուշ որոր յերգեց—  
«Բալիկ, զնի՛ր, մեծացի՛ր»:

Աստղ ես յերկրում, դեմքդ կլ՞բր  
Լուսնի բսլոր,— վարսերս՝—  
Առավոտ են աչքերդ ջինջ,  
Վճիտ են, լուրթ՝ ինչպես ծով:

Մեծացիր դու, վաղը կերթաս,  
Փողոց կերթաս խաղալու,  
Սիրտդ վորպես ծիծաղի թաս  
Միշտ զվարթ ես պահելու:

Հայրենիքը քեզ կյանք տվեց,  
Դու աճեցիր ինչպես ծիլ,—  
Մայրդ անուշ որոր յերգեց  
«Բալիկ, զնի՛ր, մեծացի՛ր»:



## Ա. Ա. Յ. Ղ. Հ. Ն. Գ. Ա. Թ. Ե. Վ.

Յեթե անցնեն դարեր, դարեր,  
Միշտ վառ մնա հսկա արեվն,—  
Քո անունը ինչքան ել դեռ  
Պիտի փայլի աստղ հնգաթեվ:

Յեվ վորքան ել անցնեն դարեր  
Թեկուզ լինեն անթի՛վ— անթի՛վ,—  
Իմ յերկրի անունը դեռ՝  
Կլինի վառ ու անառիկ:



## ՅԵՐԳ ԹՈՒՄԱՆՅԱՆԵՐԵ

Հնչում են քաղցր յերգերդ, սրտեմ,  
Մեր սրտի խորքից ու հոգուց մեր հեղ,—  
Ո՛ր, սիրտը քո վե՛հ ինչքա՞ն և հուզել  
Մարոյին պարթև, Անուշին ու մեզ:

Ծնվեցիր, յերար խոր Լոռու ծոցից,  
Ժողովուրդը մեր ավելց քեզ քնար,—  
Վոր յերդես քաղցրը,— առած արեվից  
Քնարով քո ջերմ ու ծիծաղալար:

Յերգեցիր մարդուն, ու բարձաշարչար  
Գյուղացուն դաշտի, հերկվորի՛ն, արտի՛ն,  
Յերգեցիր ամե՛ն, ամե՛ն ծառ ու քար  
Ու սերը լուսե քո ժողովրդի:

Գութանավորի յերգը յերգեցի՛ր,  
Անրերրի հոգը, վոր աալիս էր թույն,—  
Ո՛ր, ինչքա՞ն, ինչքա՞ն դու յերաղեցիր  
Տեսնել գյուղացուն հպարտ ու արթուն:

Քո հոգուց մաքուր յերգերդ անուշ  
Հոսում են մինչև սրտերը մեր վարդ,—  
Խոտը մեր հոգուն տալիս և նոր ուժ  
Ու յերգերը մեր դարձնում արեվառ:

1938



## ՆԱՄԱԿ ԱՆՆԱՍՏԱԳԾԻՆ

1

Մութը իջել է, գիշեր է արդեն:  
Լույսը փակել է թեփերը կաթի,—  
Ինձ հեռ խոսում են գրքիդ թերթերը  
Բառերով յիտակի:

2

Դու յերազել ես ջինջ յերկնքի տակ,  
Արազի պղտոր ջրերի կողքին—  
Մոտենար ու քեզ քաղցր բարեվ տար  
Յերգիդ գեղուհին:

Հեռո միասին բոտոսն գնալիք,  
Կապուտաչ ու բիլ յերկնքի ներքո,  
Շուշիկդ լցներ իր սիրտ գինին—  
Վառ բաժակը քո:

3

Ու յերբ դարունը բացվեր վարարուն,  
Իսկ անձրեվն ել յերբ հեղեղներ ծներ,  
Ու հոսեր նորից քո սիրտ առուն—  
Ու սիրտդ լցներ:



Արծաթափրփուր Արազի ափին  
Գութանավորի մեղմ յերզը հնչեր,  
Գյուղացին առած ցորեն իր ափին  
Տխրությամբ ցաներ:

## 4

Յեվ դուք այդ բուռ-բուռ ցանած հատիկից,  
Յեվ դութանով ձեր, վիճց ժանդոտած թուր,  
Յերազում եյիք դուք բերրիություն,  
Բայց լինում եր թույն:

## 5

Հիմա ինձ լսիր, քերթության վարպետ,  
Շուրջս իջել ե պայծառ յերեկոն,  
Տես թե ինչպես ենք կուում բոցակեղ  
Կյանքը՝ կապուտաչ յերկնքի ներքո:

Ահա դարուն ե, նորից պարզ յեթեր,  
Նորից Արազն ե դարձել վարարուն—  
Մենք սևահողի մեծ գիրքն ենք թերթում,  
Նորից հոսում ե մեր սիրո առուն:

Արազի ափին ահա ծիրանին  
Ձեռ արեվի տակ հասնում ե արագ  
Ու կարմրում ե անուշ դեղձենին  
Բնության ութից, ո՛ր, այնքան վարար:

Ու ահա այնտեղ բոստանիդ տեղք—  
(Վորին յերզել ես այնքան հարազատ)  
Բարձրանում ե վեր հատիկի դեղը,  
Վոր պետք ե պահ տանք հողին հատ առ հատ:

Մեր համայնական հողերի վրա,  
Կըխչան հասուն հասկերը հոսուն,  
Արեվն ել վոսկի կղարկի վրան,  
Հասկերի վրա սուս ու փափսուն:

## 7

Կանգնել են ահա Արազի ափին  
Յերկինք խոյացող շենքերը քարի,  
Յեվ յերբ ջրերում լվացվի արփին—  
Կոմբայնը առատ հացը կքաղի:

Ո՛ր, այդիններ հին, այդիններ անշուք,  
Ձեր մեջ աճում ե հյուսթալի խաղող  
Հինն անեացել զարձել ե փոշի,  
Խարջի խաղողն ե փթթում վոսկեղող:

## 8

Յերկինքը կապույտ իր աչքն ե թարթում  
Հետո վողջունում մեր ընթացքը սեպ,  
Իսկ արեվն ել իր վոսկին ե քամում—  
Հողի ծալքերի տողերի մեջ սեվ:

Մենք չենք յերողում, վոր արծաթաչող  
 Զրեբի կողքին չթվորը յերգի,  
 Յեվ վոչ Աբաղի յերգը սիրա մաչող,  
 Վոր իր ջրերով ուժգին մըրկի:

9

Ու նորից պարզ և լաղուր յեթերը  
 Իսկ ողբ փայլուն, փայլուն ապակի,—  
 Ինձ հեռ խոսում են գրքիդ թերթերը,  
 Խոհերով լեցուն բառերով վոսկի:

Յեվ քո յերգերիդ ամեն մի տողում,  
 Փայլում և պայծառ քո ջինջ անունը—  
 Հույզերիդ գեաը վարար և հոսում,  
 Ալեկոծվում և յերգերիդ հունը:

1936 թ. ոգոսուս  
 Յերեվան



Պ Ո Ն Տ Ը

Սիրով—սիրելի բանասեղծ  
 Վ. Գրիգորյանին

Հարազատ են, հարազատ—  
 Յերգիդ տողերը ամեն,  
 Իմ հոգին ջինջ ու ազատ  
 Զերմ խինդով են պարուրել:

Այնպեղ գնացքն և թուշում  
 Սուր սլանում նեռի պես,  
 Ու մի աղջիկ աչքերում  
 Ծիծաղով լի—հիշում քեզ:

Մի տեղ գրոհ ևս գնում  
 Հայրենիքի համար մեր,  
 Քո բարկ տողերն են գնում  
 Սրտերում մեր աներեր:

Մի տեղ գինվոր ևս արի,  
 Յեվ սիրահար քնարի—  
 Ճարտարապետ սրտերի—  
 Ու բանաստեղծն իմ յերկրի:

1938



## Հ Ս Կ Ա Ն Ե Ր Ի Հ Ե Տ

### Գ Ա Ն Մ

Դեկտեմբերյան ցուրտ որին  
Յերբ ժամացույցը զարկեց  
Ուզեղ հինգը, — այդ որից :  
Սրտիս քուրան հրդեհվեց :

Յես այդ որը լսեցի  
Մի ձայն հասակ, — սիրտ, լսի՛ր, —  
Ստալինն եր, վոր զրեց  
Իր պոեմը մեր մասին :

1938



### Գ Ո Ր Ի Ն Յ Ե Վ, Յ Ե Ս

1.

Ընդունիր, Գորի, հարավից եմ յես,  
Ուր բարկ արեվը կրակ է վազում, —  
Ընդունիր սերն իմ, իմ վողջույնը քեզ,  
Սերն առաջնորդի ինձ գիրկդ է մղում :

Դիմում եմ այսպես ու մտնում Գորի,  
Քաղաքն հիասքանչ, — այնքան հասարակ, —  
Սիրտս բաբախուն դառնում է արի  
Յերբ յես զղում եմ Գորին վտառելու տակ :

2.

— Սրի՛ դու, բարի՛, — ասում են կարծես —  
Ամեն ծառ ու ճյուղ — աղբյուր ու առու, —  
Ու հողիս դարձած թեվարաց բաղի —  
Ձերմ խնդությունից վեր է սավառնում :

Ու սրտատրտի մոտենում եմ յես  
Տնակին փոքրիկ, — սիրտս վոնց արտուս  
Թփրտում է ու սավառնում ասես  
Իմ հողու մաքուր յերկնքում կապույտ :

## 3.

Սպասի՛ր փոքր ինչ, կարկաչուն իմ սիրտ,—  
Դիմում եմ նրան ու մտնում փոքրիկ  
Տնակն հասարակ,— ուր Սոսն անվիշտ  
Յերգել է զվարթ հոսող չորս տարի:

Այստեղ է ծնվել. այս փոքրիկ թախտին  
Մայրն է դուրգուրել ու սրոր ասել,—  
Փայփայել նրան ալեղարդ տատին,  
Սոսն այստեղ է իր լեզուն բացել:

Գլտես, վոր, սի՛րտ իմ, այս փոքրիկ բարձին  
Գլուխն է դրել իմաստուն ու վեհ  
Սոսն մեր մանուկ, կաթով առյուծի  
Մկաններում ուժ բարձրացել է վիր:

## 4.

Ահա աթոռը այնքան հասարակ,  
Ինչքա՛ն է նստել Սոսն աթոռին.—  
Ինչքա՛ն է վաղել,— արել վոտքի տակ  
Պատշգամբ ու բակ— ներս վաղել դոնից:

— Դեպի, հաց փուր ինձ, սոված եմ, դեղի,  
Հնչել է ձայնը Սոսոյի չքնաղ,—  
Հացն առած Սոսն վաղել է դեպի  
Գետը վարարուն աչքերում ծիծաղ:

Ու չորրորդով հով դովն է իջել  
Շատ տերեվախիա ծառերի վրա,—  
Ու ծառերը այդ շատ են խշացել—  
Անձրևի իման շեղակի վարար:

## 5.

Այս ծառի տակ է Սոսն խաղացել,  
Այս տեղ է սերտել իր դասը այնքան,—  
Ընկերների հետ յերգեր է հյուսել  
Ու այդպես Սոսն մտել է նոր կյանք:

Ահա դպրոցը, վորտեղ միշտ Սոսն  
Ընկերներին է ոգնել սիրալիր,—  
Այստեղ բարձրացավ ու դարձավ սոսի,  
Այստեղ նա թրծեց, կոփեց կամքը իր:

## 6.

Շրջում եմ այսպես,— Գորին վոտքի տակ,  
Ամեն մի անկյուն, ամեն տեղ շրջում—  
Այստեղ խաղացել վաղել է արագ  
Սիրելի Սոսն— սիրտս է չչնջում:

— Իմ հոգին ես դու, իմ սիրտն ես, Գորի՛,  
Դու պարզեվեցիր ինձ կյանք ու արեվ,—  
Վերագառնում եմ յես սրտով արի,  
Բեզնից կտանեմ իմ յերկրին բարե:

Մնաս բարե, առաջնորդի սրորան,  
Հարազատ են ինձ քո ջուրը, հողը,—  
Դու մայր արեելք, արև հուրհրան  
Սիրտս իմում է քո վոսկե շողը:



Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր

— Խարտյաչ տղա,  
 Ինչ ես քաղում,—  
 Հետն ել յերզում  
 Ու ժիր խաղում:

— Ծաղիկներ եմ  
 Քաղում,  
 Խաղում:

— Ի՞նչ պիտ անես  
 Ծաղիկներն այդ,—  
 Սիրուն տղա՛,  
 Այտերով վարդ:

— Քաղած կարմիր  
 Ծաղիկները  
 Պետք է լինեն  
 Իմ նվերը:

— Ո՞ւմ պիտի տաս  
 Նվերը քո,—  
 Նախչուն աղա  
 Սեվ սաթ ունքով:

— Ստալինին  
 Իմ հորը մեծ,—  
 Վոր ինձ նման մանուկներին  
 Լավ կյանք բերեց:



ՇՆՈՐՀԱՎՈՐ ԿՈՒՆՈՒ ՏԱՐԻՆ, ԱՌԱՋՆՈՐԿ

1

Որացույցի ամեն մի թերթն ունի մի խոր պատմա-  
 թյուն,  
 Վոր կրում է հին դարերից մինչև մեր դարն այս  
 վոսկի:

Մեր որերի ստալինյան որացույցում՝ մարդկության  
 Պատմությունն է, մեր պայքարի ու լուսաշող մեր  
 հոգին:

Ահա սիրտն իմ բաբախում է ու լցվում է խնդությամբ,  
 Յերբ պոկում եմ որացույցի վերջին թերթը իմ  
 պատից,  
 Սիրտն իմ ուրախ ունկնդրում է պատմությանը  
 մեր անամպ,  
 Վոր տանում է իր վեհ սրտում խորհրդային ամեն  
 մարդ:

2

Այդ ո՞ւմ ուժն էր, վոր անսասան սառույցների  
 աշխարհում  
 Դյուցադներին ուժ, թե տվեց— վոր զարկեցին ալեծեծ  
 Դրոշը մեր հայրենիքի սառ բեվեռի զազաթում,  
 Այդ հայրենի սերն էր անհուն ու առաջնորդը մեր մեծ:

Մահմանապահ մեր քաջերին, վորոնք աչքի  
 դաշույնով,  
 Մուլին են կիսում սահմանների, արծրվի սուր  
 հայացքով,  
 Անընկճելի իրենց կամքով մեր սուրբ սահմանը հսկում:  
 Այլ ո՞ւմ ուժն էր, վոր բերեց մեզ յերջանկություն ու  
 բերկրանք,  
 Վոր հոսել է ամեն խրճիթ, ամեն սրա, ամեն սուն,  
 Վոր ամեն մարդ սւղում է դեռ ինքն ունենա յերկար  
 կյանք,  
 Ու հայրենի ողբ չնչել, լինել արի ու խնդուն:  
 Դյուցազնական անհաղթ ուժը առաջնորդն է մեր  
 անդին,  
 Վոր տանում է դեպ հաղթանակ արեգնափայլ  
 յերկիրն իմ,  
 Ուժն այդ հզոր իր մեջ ունի բյուր մարդկային վեհ  
 հոգի:  
 Իմաստության այդ ովկյանը սիրելին է ազգերի:  
 Ժամացույցի վոսկե սիրտը բարախում է անընդհատ,  
 Ու թռչում են վայրկյանները— ինչպես յերգի  
 թրթիռներ,  
 Արագաքայլ մոտենում է մի նո՛ր արև, մի նո՛ր բախտ,  
 Ստալինյան նոր տարին է, վոր դալիս է անվեհեր:

3

Լուսաբացին յերբ արեվը նոր է զարթնում իր քնից,  
 Առաջին իսկ իր վողջույնը— առաջնորդ, քեզ է  
 տալիս,  
 — Շնորհավոր քո նոր տարին, մեծ առաջնորդ  
 աշխարհի,

Իմ փոխարեն վողջ մարդկության դու քո վառ լույսն  
 ես տալիս:  
 Ու ջրերի կապույտ արքան, այլքներով խոլապար,  
 Յեվ հայրենի իմ լեռները զազաթներով վերսլաց,  
 Կարկաչահոս սրագ ջրերը ու ծաղիկներն անհամար,  
 Ասում են քեզ, շնորհավոր քո նոր տարին,  
 առաջնորդ,  
 Թոթովախոս մանուկները ու ծերերը այեհեր,  
 Ով դադգահի հեռ է լինում, ով յեյել է պայքարի  
 Ով կրում է իր վառ սրտում հայրենիքի պայծառ սեր,  
 Ասում են քեզ, մեծ առաջնորդ— շնորհավոր նոր  
 տարիդ:  
 Յես ել անա թոթովախոս իմ տողերով, ջերմ սրտից,  
 — Շնորհավոր քո նոր տարին,— ասում եմ քեզ  
 սրտաբաց,  
 Ստալինյան սրացույցն այս վար կախում եմ իմ պատից  
 Ամեն մի թերթ մի սրեմ է ու մի վեպ է չըզրված:



## Հ Ս Կ Ա Ս Ե Ր Մ Ա Հ Ա Ր

Քայլում ե տես մեծ մարդը,  
 Հսկա ու խոր, ու պարթեկ,—  
 Նույնիսկ կարմիր այն վարդը  
 Խոնարհվում ե կարմրաթեկ,  
 Յերբ անցնում ե այն մարդը:

Յերբ դադարեց նրա վոսիկի  
 Մրտի դարկը համընթաց,—  
 Մեռավ Սերգոն,— այդ խոսքից՝  
 Մի պահ մարդը սրթսրթաց  
 Ու խոնարհվեց դեպի ցած:

1938



1

Մեր լույս կյանքի դուռ բացողը,— յեղավ ո՛վ,  
 Քաղաղության սերմ ցանողը,— յեղավ ո՛վ,—  
 Մեր սրտերին լույս ավողը յեղավ ո՛վ,  
 Մեր մեծ հայրը՝ Ստալինն իր արևով:



## 2

Ծափ ու ծիծաղ մեզ տվողը— ս՞վ է վար,  
 Այս լի կյանքը մեզ բերողը— ս՞վ է վար,—  
 Առատութեան հորդ աղբյուրը— ս՞վ է վար,  
 Մտալինն է մեր մեծ հայրը փառավոր:

1937



## Կ Ա Ր Ո Տ

## 1

Անհուն է կարոտը իմ սրտի—  
 Նվիրական Գորի—  
 Յեվ յերգս այսոր քեզ պիտի տամ՝  
 Յես սիրով խորին:

Այստեղ եմ, յերկրումն իմ Հայաստան,  
 Ուր կյանքն է ծաղկում,—  
 Մահայն քեզ հիշում եմ կասուսան  
 Գորի իմ, զնդուն:

Այստեղ ել ջրերն են կարկաչում,  
 Գաշտերսմ՝ յերգում,—  
 Նայում եմ ջրերին շառաչուն  
 Գորին եմ հիշում:

Այստեղ միշտ ծառերն են սրորվում  
 Հարսի պես նախշուն,—  
 Ու յերբ նայում եմ ծառերին խշտան  
 Գորին եմ հիշում:

Անցնում է մանուկը փողոցով  
 Յերգում է անուշ,—  
 Ու ճախում զեղպեղուն զնդոցով  
 Գորին է անուշ:

## 2

Անդին իմ, ո, սե՛ր իմ և կյանք իմ—  
 Գորի՛ իմ զոհար:



Ձեմ կարող յես զսպել բերկրա՛նքն իմ—  
Ու սերս վարար:

Նայում եմ մարդուն այն իմաստուն  
Արեվից արև,—

Այդ արեվն ե մտնում ամեն տուն  
Ու տալիս բարև:

Քո ջուրն և խմել նա ու աճել

Ծոցիդ մեջ անդին,—

Բողբոխ լույս կյանք ե պարզեել  
Սիրով կաթողին:

## 3

Հիմա յերբ նայում եմ նրան յես  
Սիրոս ե փոթորկվում—

Ու սերս հոսում ե դեպի քեզ—  
Գորի իմ խնդուն:

Կզամ յես կըտեսնեմ լույսերդ,—

Կըզամ քեզ այցի,—

Քո սերը վառել ե իմ սերը  
Սրտումս առնացի:

Կայցելեմ խրճիթըն այն լույսի.

Տնակն այն արևի.—

Կըջեմ հոգուս հետ միասին  
Բակը արծիվի:

Այդպես յես իմ շուրջն եմ նայում միշտ,  
Նվիրական Գորի,

Ասում եմ քո վորդին եմ անվիշտ

Սիրով իմ խորին:

## ՋՐՈՒՅՑ ԱՐՇՎԻԸ

Թեվին ավեց ու թռավ,  
— Արծիվ, եդ ո՛ւր ես թռչում,—  
Քո հաղթական հզոր չուն  
Իմ սիրտը խինդով արավ:

Բայց արծիվը վոսկեթուր,  
Դեռ թռչում եր ու թեվում,—  
— Դեպի արևն եմ թռչում,  
Դեպ արևը վոսկեհուր:

Այն արևին, վոր հիմա  
Լույս ե տալիս աստղերին,—  
Լույս ե տալիս մտքերին,—  
Նա, վոր դարեր ե անմահ:

— Դեպի կրեմլ ես թռչում,  
Արծիվ— ինձ տար թեվերիդ,  
Արծիվ, արծիվ իմ բարե—  
Ինձ հուզում ե քո հաղթ չուն:

— Քեզ յես տանում եմ, տանում,  
Յես տանում եմ սիրտը քո,  
Ամենքի սիրտն եմ տանում—  
Մեր արևին միշտ հզոր:



## Յ Ե Ր Գ Ե Ր

## Յ Ե Ր Գ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Արևի պես— հայրենիքն իմ  
 Վստկեչողուն սեր կտա,—  
 Ալվարդի պես— հայրենիքն իմ  
 Անուշ—անուշ բույր կտա:

Իսկ յես ու դու,  
 Յեղնիկ աղջիկ,  
 Ուրախ սիրով հանդ կերթանք,  
 Միշտ զվարթուն—  
 Յեղնիկ աղջիկ,  
 Վտաքերիդ սակ վարդ— կերթանք,  
 Լույս ցողերը— լուսե դեմքիդ  
 Արի՛, արի՛, հանդ երթանք:

1938



## Յ Ե Ր Գ Յ Ե Ր Կ Ր Ո Ր Գ

Վարդ եմ քաղել շողշողուն  
 Յեղեմական պարտեզից,  
 Վրան նախշուն  
 Ձար մեղուն,  
 Կաթ ե ծծում հյութալից:

Ձուր եմ առել ազրա—ակից  
 Նուռ վարդերին ցող արել,  
 Վոր թարմ մնան իմ սրալից  
 Հայրենիքիս նվիրեմ:

Աս վարդերն իմ—  
 Փունջ առ փունջ,  
 Անուշահոտ բույր ունի,  
 Փնջով առ դու շունչը իմ,  
 Վոր համ ու հոտ, բույր ունի:

1938



## Յ Ե Ր Գ Յ Ե Ր Ր Ո Ր Գ

Սիրոս խնդուն ծափ կտա,  
Նախչուն ծափ թևերով,—  
Ծափ կտա ու չափ կտա—  
Անուշ ու սլարդ յերգերով:

Սերս անուշ—  
Հայրենիքին,  
Յեվ թարմ ուժն իմ  
Նրան անդին:

Կյանքս վորպես թարմ ծաղիկ,  
Հայրենիք դռնի՛դ վրա,  
Ու աչքերս դեղեցիկ—  
Լույս փռի համբիդ վրա:

Սիրով խնդուն  
Հողիս անուշ,  
Թող քեզ ծփա—  
Հայրենի ուժ:



## Յ Ե Ր Գ Զ Ո Ր Ր Ո Ր Գ

— Շուշան աղջիկ,  
Շուշան վառ,  
Վարդերն այդ յերբ ես քաղել,  
Դռնիդ վրա, վոր պայծառ  
Սյնպես դվարթ են թառել:

— Շուշան աղջիկ  
Անուշիկ,—  
Վարդի պես կյանքդ դալար,  
Ու աչքերդ դեղեցիկ—  
Պահել ես դու ո՞ւմ համար:

— Վարդ քաղեցի առավոտ,  
Ցողով անուշ ու խաղաղ—  
Դալար կյանքս, այ տղա—  
Պահել եմ յես միշտ անմար,  
Իմ հայրենիքի համար:



## Յ Ե Ր Գ Է Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Դու սեր ունիս, ունիս ծով սեր,  
Աչքեր ունիս մի-մի ծովեր,  
Մազերդ սև, դիչեր ե սև—  
Հոնքերդ սև— կամարաթի:

Միրող վարդ ե— վարդ ե սիրող—  
Կուրծքդ ձերմակ Ալագյաղ,  
Դու վաղուց ես քո սև դարդը  
Թաղել փոշում—  
Կյանքդ ե խառ:

Հայրենիքում, ալվարդ չուշան,  
Կյանքն ե ինդուն ու միշտ վառ,  
Մեր յերկուսի սերն ե նշան—  
Հայրենիքիս սերն անմար:

1938



## Յ Ե Ր Գ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

Ալագյաղի արմատ դահին  
Շողքը կպավ արևի,—  
ձերմակ դոչից աղմկալից,  
Յերզը հնչեց պաղ անվի:

— Ո՛ւր ես վազում թավազուր  
Արծաթաջուր ջինջ առու,—  
Քո վրաքի տակ առած բոլոր  
Զմրուխտ սարերը՝ հեռուն:

Զընդաց պռուն, յերգեց առուն,—  
— Յերկրի սրաին ջուր տալու,  
Ու թափ առած թռավ հեռուն—  
Դաշտերի մեջ յերգելու:

1938



## Ե Ե Ր Գ Ե Ո Թ Ե Ր Ո Ր Գ

Յուլաց արևն—

Հավքերն ուրախ կը յերգեն,  
Հովիվները սարը յելան—  
Ալադյայի փեշերեն:

Կուժը ուսին—

Ձքնաղ մի կին դուրս ելավ,  
Յեղնիկի պես ջուրը գնաց—  
Կուժն արծաթած տուն տարավ:

Սիրտս ել ցոլաց—

Ալադյադ, քո շողերից,  
Մարմանդ հովից մի կուժ առած  
Ձահեկացավ քո զովից:

1938



## Ե Ե Ր Գ Ո Ի Թ Ե Ր Ո Ր Գ

Գիշեր իջնի արծաթ գլխիդ,  
Ալադյադ:  
Վառ լույսն իջնի քո փեշերին,  
Ալադյադ:

Գիշերվա լույս գեղեցկուհին,  
Ալադյադ:  
Իջնի գահին քո ձյունաշող,  
Ալադյադ:

Քո փոշերից աստղեր կեղնեն,  
Ալադյադ:  
Դիցուհու հետ պար կրունեն,  
Ալադյադ:

Սիրտս կգա քեզ մոտ զոնադ,  
Ալադյադ:  
Աստղերի հետ լույս ու շարձադ,  
Ալադյադ:

Յոթը տարվա նուան գինին,  
Ալադյադ:  
Լցրած վոսկե շողուն թասում,  
Ալադյադ:

Ստալինի շող կենացը,

Ալադյազ:

Մենք կխմենք աստղերի հետ,

Ալադյազ:

Ամեն գիշեր, անուշ գիշեր,

Ալադյազ:

Քեֆ կանենք մենք մինչև արև,

Ալադյազ:

1938



\*\*\*

Արծաթ առուն սարեն կուգա  
Մարմանդ կերգե ու կանցնի,  
Յեվ իմ սրտին պաղ ջուր կուտա—  
Ծով հով կուտա ու կանցնի:

— Ո՞ւր ես գնում-վազում, առու,  
Ալմաստ հազած սարերից,  
Ո՞ւր ես գնում այդքան հեռու  
Մի կում ջուր տուր ինձ նորից:

Բայց գնում ե,— լուռ խոխոջում  
Առուն անցնում դաշտերով,  
— Ա՛խ, իմ սիրտը քեզ ե կանչում  
Հետ դարձ, առու զով սիրով:

— Դո՛ւ գովացար, հերիք ե, մարդ,  
Յես գնում եմ բաց դաշտով,  
Պիտի ջրեմ ցորեն ու մարդ,  
Վոր հաց լինի լի ու բուլ:

— Չե՞ վոր նրանք սրտով ծարավ  
Սպասում են դեռ ինձի,  
Յես հասկերին ջուր տամ,— ասավ,  
Վոր արևը չխանձի:

— Դու ել կուտես լուս հացից եղ,  
 Ու ինձ ելի կհիշես,  
 Մի՛ վռազի կղատնամ յես  
 Ու ջուր կտամ սիրով քեզ:

Գնա՛ առու, — վազի՛ր, առու,  
 Ջրի՛ր հանդերը բոլոր,  
 Ջրի՛ր սիրով մտան ու հեռուն,  
 Վոր հաց լինի ամեն որ:

1938



\*\*\*

Ձովերի հետ, հովերի հետ  
 Յեկար դու,  
 Գարուն անուշ, դարուն կանաչ  
 Միշտ խնդուն:

Կանաչն ահա արչավում է  
 Դաշտերով,  
 Առնում սար, ձոր, առնում արտ  
 Ջինջ յերգով:

Կանաչի հետ հովն է խաղում  
 Շնկչնկում,  
 Ու հանդվորի յերգն է անուշ  
 Ջընդղընդում:

— Բոյ քաշեք,  
 Անուշ բալեք,  
 Մեր հացը  
 Միշտ բոլ արեք:

— Ես տարի  
 Բերքի տարի,  
 Գարուն ջան,  
 Գալը բարի:

— Բոյ քաշեք  
Ծիւեր-ծիւեր,  
Ձեզ մատաղ  
Անուշ հովեր:

Կանաչի հետ հովն ե խաղում  
Շնկչնկում,  
Ու հանդիորի յերզն ե անուշ  
Ձրրընդում:

1938



Լուսնյակն անուշ յերկինքն յելավ  
Լույսը խաղաց ջրերում,  
Ջրվոր ախպերս արտը յելավ  
Յերզը անուշ շուրթերում:

Ձուրը կապեց արտի վրա  
Բահը խնդաց զրնգուն,  
Իսկ ջրվորի սրտում ահա  
Ուրախությունն եր դիզվում:

Բահն եր յերգում, ջուրն եր յերգում,  
Հատիկներն միշտ դվարթ,—  
Ձուր են խմում— հողի դրկում  
Շողում վորպես զառ արմատ:

Կյանք են առնում հողի ծոցում  
Ամեն, ամեն մի հատիկ,  
Բոյ են քաշում ու բարձրանում  
Այնքան նազուն, պեղեցիկ:

1938





\*\*\*

Դաչա ու անտառ  
Գարուն հազան,  
Կանաչ հազան  
Դար ու սար:

Իմ հողին ել  
Նոր կյանք առաջ,  
Նոր կյանք առաջ  
Սիրավառ:

Ու կանաչի  
Ձմրուխտի մեջ,  
Յերգեց առուն  
Յերզն անշեջ:

Իսկ իմ հողում  
Մարտի յերգեր,  
Ու դարունքին  
Բացվող սեր:

Ձա՛ն իմ դաշտեր,  
Ի՛մ հովիտներ,  
Յեվ պաղ, մաքուր  
Ձինջ ջրեր,

Վոր հայրենի  
Հողի համար,  
Հոսում եք հար  
Ու վարար:

Գարուն հազան  
Դաչա ու անտառ,  
Բերին ծաղկունք  
Անհամար:

1938

★

★



Սիրով՝ Հովիկ Մելիքյանից

Յեթե արմատը ամուր ե լինում  
Յեվ խորը, խորը թաղված ե հողում—  
Այդ ծառը— ծառը յերկար ե ապրում:

Դաժան քամին թող շարունակ փչի,  
Ու ծառի շուրջը հողմը շոռաչի,—  
Կայծակ թող զարկե, — բայց նա դեռ կաճի:

Մեր խորհրդային մարդն ե միշտ ալիսես,  
Կանգուն ե ամուր— հսկա կաղնու պես,  
Յե՛վ սրտով մաքուր ե՛ սիրով նա կեզ:

Իմ ժողովրդի մեջ ե արմատը  
Ի՛մը ե քո՛նը ե ի՛նչքան շատ ե,  
Լուսե մեր կյանքը— ու մեր հավատը:



Առանց ջրի ու լույսի,  
Առանց հողի բերքառատ—  
Արդյո՞ք վարդը կբուսի  
Թերթիկներով թարմ ու շատ:

Ո՛ր, վո՛չ, յերբե՛ք, չի աճի՛,  
Չի՛ բարձրանա վո՛չ մի ծի՛լ,  
Յեվ յերբեք չի նվաճի  
Անգամ կյանքից մի կաթիլ:

Իսկ հողը իմ հայրենի,  
Խորհրդային ու անծայր,  
Յեվ ժողովուրդն իմ արի  
Չուրն ու լույսն են մեր պայծառ:

Հենց ա՛յդ, հենց ա՛յդ ե միայն,  
Վոր ամեն մարդ ինչպես ծիլ  
Բարձրանում ե, մտնում կյանք—  
Խմում կյանքի բյուր կաթիլ:





Արծաթ առուն թավալվում է խոխոջուն—  
Այդ մեր յերգն է այդպես ուրախ, կարկաչուն:

Վարդն է բացվում ցողով, շաղով սիրասուն—  
Այդ յերկրիս մանուկներն են յերազուն:

Արևն ահա լույս խուրճերն է ցրում, տե՛ս—  
Այդ հասկերն են մեր արտերի, լույսի պես:

Արծիվն ահա բարձրանում է թռչում դեռ—  
Մեր հերոսն է թռչում այդպես ցուրտ բեվեռ:

1938



Ասացիր ինձ դնա— բարեկամ,  
Թող անտառն աղմկի ուսերիդ,  
Ասողերն ինձ ասացին և հանդան,  
Յերբ լույսը ծավալեց յերգ ու խինդ:

Յերբ լույսը ծավալեց յերգ ու խինդ  
Յես մտա մի անտառ աղմկոտ,  
Ու անտառը ցոլաց իր հակինթ  
Մրդերով:— Յես վաղո՛ւց եմ կարոտ:

Աղմկում յես դտա իմ հոգին,  
Ու կյանքն իմ արևոտ ու լուսն,  
Ո՛ր, անտառ իմ, անտառ իմ անդին—  
Վարարել են արդեն իմ հույզերն:

Շուրջս յերգ ու յերգեր անտառի  
Ու շառա՛չ, աղմկոտ, դվարթո՛ւն,  
Դեռ ինչքան յերգերն իմ պիտ վառի—  
Ո՛ր, աղմուկն այդ, աղմուկը ինդուն:

Գանգի յես ժողովուրդը դտա,  
Ու մարդու, ու մարդու ջերմ հոգին,  
Ջահել կյանքս նրանց միշտ կտամ,—  
Ո՛ր, անտառ իմ, անտառ իմ անդին:

1938





Առավոտը բացվում է նաղով,  
Յողերը իջել են վառ վարդին,  
Խաղում է ահա մի մարմանդ զով  
Վարդենու կարմրաթեզի ալ այտին:

Ու յեղնում է արևը պայծառ  
Ու ցրում շողերն իր կիթ առ կիթ,  
Յեզ բացվում է վարդը, վարդավառ—  
Ու սիրով ըմպում է ցողն հակինթ:

Իմ սիրտն ել վարդի պես միշտ բացվող,  
Իմ յերկրի Արևով է արբում,  
Իմ սրտի վրա միշտ սիրո ցողն  
Ինձ ասում է սիրիք,— արդյոք ո՞ւմ:

— Սիրիք քո հայրենիքը պայծառ,  
Նրա ջուրը մաքուր ու խաղուն,  
Դու սիրիք հողը քո, վորի վառ  
Սուրբ սրտից բյուր վարդեր են բղխում:

Յեզ այո՛, կսիրեմ շարունակ  
Քանի վոր յես ծին եմ իմ հողի,  
Քանի վոր ինձ տվեց կյանքի ակ,  
Դեռ ինչքան վարդերով է հղի:



. . . Յերգն իմ առ  
Մ. Խերանյան

Մ'ա, քույրիկ ի՛մ, վարդն ի՛մ ա՛ռ,  
Սիրտս է տրված թիփի մեջ,  
Բաժակի մեջ սերն ի՛մ վառ  
Մ'ա, քույրիկ ի՛մ, վարդն ի՛մ ա՛ռ:

Յես ել, վարդն իմ, վարդն իմ ա՛ռ,  
Մի հողից ենք, մի ջրից,—  
Բարկ արեվի տակ պայծառ  
Մեծացել ենք, վարդն իմ ա՛ռ:

Հայրենիքն իմ,— վարդն իմ ա՛ռ,  
Մեզ սեր տվեց— սեր տվեց,  
Վոր մեր խինդը միշտ վարար  
Հոսի մաքուր, վարդն իմ ա՛ռ:



\*\*\*

Յես դիտեմ, յես դիտեմ չի դալու  
 Ձի լինի որն այն, ո, յերբեք,  
 Վոր յերզն իմ դադարի հնչելուց,  
 Վոր քնարն իմ ընկնի վայր բեկ-բեկ:

Քանզի յես իմ յերգով, քնարով  
 կապված եմ յերկրիս մայր հողին,  
 Քանզի սիրտս ու հոգիս յերգերով  
 Ձուլել եմ, կձուլեմ որերին:

Յե՛վ կյանքն ի՛մ, քնարն ի՛մ, յերգերն ի՛մ  
 Տվել ե հայրենիքն ինձ լուռե,  
 Ե՛ւ ինչպես կարող ե սպասահել,  
 Հույլերն իմ, յերգերն իմ վարար չհոսեն:

1938



Պ Ո Ն Մ Ն Ե Ր

**ԻՄԱՍՏՈՒՆ ԱՐԾԻՎԸ**

(Հեկյար)

1

Ինչպես ուղտերի քարավանն ասես  
Լեռներն են ձգվել հանգստանալու,—  
Լեռները այս հին կանաչով պես—պես  
Ինչքան են տեսել կռիվ ու արյուն:

Հենց այդ կանաչոտ լեռների դրկում,  
Ինչպես թխսամբեր գյուղն եր ծվարել,—  
Յերթիկների ծուխն անգամ չեր յեղնում,  
Թշվառությունն եր այդ գյուղում նստել:  
Յե՛վ խրճիթները նման տուփերի,  
Կաղք-կողքի կարծես շարել եր մի ձեռք,—  
Այդ տնակներում զրկանք ու կարիք  
Ինչքան եր տեսել գյուղացին այն մերկ:

Այդ տնակներից մեկումն եր ապրում  
Սաչոն ու կինը՝ ճերմակ մազերով,—  
Ունեյին վորդիք— նրանք ել գյուղում  
Շատ եյին տեսել զրկանք, մահ ու սով:

ու հայրը նրանց աղոթում եր միշտ,  
Վոր աստված «պահէ» վորդիններին իր՝  
Զմեռնեն քաղցից, — ու սրտում խոր վիշտ, —  
Մտորում ե նա, — դե մարդ ես, ապրիր:

Ու մի որ մահը սև զոմեչի պես  
Զօքեց Սաչոյի խրճիթի շեմքին,  
Սովամահ յեղավ կինը՝ Կալիփանն,  
Մարսափը աիրեց հորը, ամենքին:

Տխրեց ծերունին: Արդյոք ի՞նչ աներ.  
Կարիքը, վորպես սրասուր դաշույն, —  
Հասել եր բկին, ու դեռ սեղմում եր,  
Ու կյանքը նրա դարձել եր աշուն:

2

Դրտում վայում եր բքաշունչ քամին  
Նման վիրավոր կաղկանձող մի շան,  
Ի՞նչ վայ տար ծերը իր չարքաչ հալին,  
Քամին նշան եր ցրտաշունչ աշնան:

Ու մի յերեկո վորդինների հետ  
Ծերունին նստած փափուկ իր բարձին, —  
Հեքյաթ եր պատմում հին-հին որերից,  
Վոր լսել եր դեռ մանուկ հասակից:

— Գիտե՞ք, վորդիններ, վոր մի ժամանակ,  
Յերջանիկ կյանքը բաժանում էյին, —  
Պատմում եր Սաչոն, — ծերն այդ գլխահակ,  
Զոռ տալով իրա յերկար չիբուխին:

— Ինչպե՞ս թե, հայրիկ, — Դավիթը ասաց,  
Վոր վորդիններից ավելի վորքն եր, —  
Բա ինչո՞ւ մեղ ել մի բան չհասավ, —  
Յերջանիկութունը բաժանողն ո՞վ եր:

— Դե լսիր պատմեմ, Դավիթ, սիրելիս,  
Թե ինչո՞ւ մեղ ել մի բան չհասավ, —  
Յերբ ժողովրդին բախտ էյին տալիս  
Գյուղացին այդտեղ վախտին չհասավ:

— Ուշացել եր նա: Տրեին եր հաղնում,  
Ու յերք տեղ հասավ, — ասացին նրան, —  
— Յերջանիկութունը քեզ ել չի հասնում,  
Գյուղացի յես դու, տրեխով մնա:

— Դրա համար ե, վոր մենք բախտ չունենք,  
Դրա համար ե, վոր դարձանք անուժ, —  
Պատմում եր ծերը...  
Դավիթըն արդեն ննջել եր անուշ:

3

Սաչոն տարում եր վորդինների հետ,  
Ու գոյությունն իր մի կերպ քաչ տալիս.  
— Չեմ դնա Ասլան աղի մոտ, ա՛՛ հեր,  
Աշխատանքը շատ, փող ել չի տալիս:

— Յես ել չեմ դնա, — ասաց մյուս վորդին,  
Չարչարանքն ինչքա՞ն ու մի փորի հաց, —  
Բավական ե, վոր ես ժողովրդին  
Թողնեն մերկ, սկլոր, շարունակ սոված:

Ի՞նչ անէր հայրը: Ծերն այդ այեհեր,  
 Վոր դլխի վրա ձմեռն եր նստել,—  
 Լուռ լսում եր նա,— ճիշտ ե, չե՞, ա հեր,  
 Աշխատանքը շատ,— վայ եսպես ասրել:

## 4

Ա մի յերեկո ծերունին իրա  
 Վորդիների հետ վորոչեց մի բան,  
 Թափ տալով չիբուխը քարերի վրա  
 Ասաց,— դուք ընկեք հենց վաղը ճամբա:

Ծերունին վառեց չիբուխը իրա,  
 Կուլ տալով ծուխը մի թեթև հաղաց,—  
 Տեղավորվելով իր բարձի վրա  
 Գողգոթուն ձայնով հայր Սաչսն ասաց.

— Պեաք ե ձեզ դրկեմ հեռու ճանապարհ,  
 Մեզ յերջանկություն, բախտ վորոնելու,—  
 Կընկնեք նոր քաղաք, ու մի նոր աշխարհ,  
 Կձգտեք այնտեղ մի բախտ գտնելու:

— Յերեք հողի յեք, յերեք ճանապարհ,  
 Ամեն մեկըդ մի ճամբով կգնա,—  
 Ու հաց կը գտնեք մի փորի համար,  
 Բերջանկությունը գտած հետ կգաք:

## 5

Վորդիներն յելան, ճանապարհ ընկան,  
 Ըամբարաժանում ասացին իրար,—

— Հենց վոր բախտ գտնենք, պետք ե չուտ հե՞  
 դանք,—

Մեր ծերուկ հորը չթողնենք թշվառ:

Ամենափոքրը՝ Դավիթն ել դնաց,  
 Քայլեց նա դանդաղ իր ընտրած ճամբով:  
 Հասավ նա մի տեղ: Ու կանգնեց, մնաց,—  
 Ճամբան հատվում եր մի ուրիշ ճամբով:

Հատման այդ կետում կային յերկու սյուն.  
 Գրված եր հենց այդ սյուների վրա,—  
 — Յեթե աջ դնաս, արջի մոտ կընկնես,—  
 — Յեթե ձախ դնաս, արծիվ կտեսնես:

Վոր ճամբով դնար Դավիթ դյուղացին.  
 Աջով, թե ձախով,— մտածեց նորից,—  
 Մտածեց մի քիչ ու ընտրեց մեկն,—  
 — Ավելի լավ ե, յես դնամ ձախից:

Գնաց ու դնաց և յերրորդ որը  
 Տեսավ անտառի յեղերքը լուստտ,—  
 Տեսավ շողջողուն արեգակը, վոր  
 Նստած եր վրան արծիվն արեվոտ:

Արծիվը իր սուր աչքերով ասես,  
 Մեր ճամբորդ տղին ճանաչեց, ասաց.  
 — Եդ ո՞ւր ես գնում, Դավիթ, մի ասես,  
 Եդ ի՞նչպես յեղավ, վոր ետեղ հասար:

— Յերջանկություն և բախտ վորոնելու,  
 Ասաց Դավիթը,— ուղում եր անցնել,—  
 Արծիվը ասաց,— բան եմ ասելու—  
 Յերջանկությունդ այստեղ ես գտել:



— Ի՞նչպէս թե, ո՞ւր ե, բա չի յերևում,  
Ասաց Դավիթը մի վտըր շջմած,—  
Նայեց նա չորս կողմ, միայն վերևում  
Արևի վրա արծիւն եր նստած:

— Յերջանկությունը ճամբին չի ընկած,  
Ասաց արծիւը ուղեորին մեր,—

— Յերջանկությունը գտնելու համար  
Կարողություն ե հարկավոր, ուժեր:

— Յեա քեզ ցույց կտամ դտնելու ճամբան.  
Առ մահակը այս, յեղիւր անդիջում,—  
Քեզ կհանդիպի արջը, սև, անբան,  
Կսպանես նրան հենց ճամբի միջում:

— Փորից կհանես մի վոսկե տուփիկ,  
Ու յերբ կարենաս այդ տուփը բանալ,  
Կդանես այնտեղ կյանքը յերջանիկ  
Յեվ ճամբադ մաքուր, անփուշ կդառնա:

6

Լսեց արծիւին ու մահակն առավ,  
Դարձավ Դավիթը իր յեկած ճամբով,  
Տեսավ նա արջին վուչոտ ու սլառավ,—  
Վոր մոնչալով անցնում եր թափով:

Մահակը քաշեց ու անցավ առաջ,  
Դավիթը արի, դյուրացու վորդին,—  
Արջը հեռ դարձավ: Ու նոր թափ առած,  
Հաւձակիկեց ուժդին: Բարձրացավ վուչին:

— Գլորվեցիր հեյ, հողեղեն դու մարդ,  
Քո ուժը ի՞նչ ե, դու յես՝ մի մահակ:  
Փոչին յելել եր ինչպես ծանր ամպ,  
Ու մոնչում եր արջը դժնդակ:

Իր հաղթանակով արջը հիացած,  
Շարունակել եր ուղում իր ճամբան:

— Հեյ, ետեղ եմ յետ, յես դեռ չեմ մեռած,  
Կարող ես՝ մեկ ել արի ինձ վրա:

— Դեռ պետք ե կովենք, ի՞նչու յես վախչում,  
Մեր այս կռիվը դեռ չի վերջացել:  
Գյուղացի Դավիթի ձայնն եր դողանջում,  
Ասես մորիկ եր այնտեղ բարձրացել:

Ձայրացավ արջը, հեռ դարձավ նորից,  
— Քո դատաստանը հիմի կտեսնես,—  
Ասաց ու կարծես գլորվեց թափից,—  
Ինչպես լեռներից հսկա քարն ասես:

Այդ պահին վերից արծիւն եր թռչում,  
Կռիվը տեսավ ու իջավ նա ցած,—  
— Հեյ Դավիթ, ուժ առ, յեղիւր անդիջում,  
Կատաղած արջին գլորիւր դու ցած:

Ասաց արծիւը ու կոցահարեց  
Արջի աչքերը հանեց իր բնից,—  
Յեվ հենց այդ պահին մահակը շաշեց,—  
Արջը գլորվեց, մոնչաց ցավից:



Յեզիլ իրոք դայլն եր խաղով ու պարով,  
Գալիս եր ահա նա դեմ հանդիման,—  
Դավիթին ասաց,— հողեղեն, բարով,  
Գայլի աչքերը նորից փայլ առան:

Յեզիլ հենց այդ պահին մահակը շաչեց,  
Սահայն չկտրեց, դայլը ցատկեց վեր,  
Շողոքորթությամբ այսպես նա դռնեց,—  
— Նստիր քիչ խոսենք, բարեկամ, ընկեր:

— Չխաբվես, Դավիթ, յեղիր անդիջում,  
Քեզ բարեկամ չե դայլը կատաղի,—  
Ուժ առ ու խիիր, նա վերջին շնչում  
Դեռ քեզ կաղաչի:

Ու նա ուժ առած չորս կողմը նայեց,  
Թե ո՞վ եր նրան խորհուրդը տալիս,—  
Տեսավ արծիվն եր, աչքերը փայլեց.  
Արծիվն եր նրան ոգնության դալիս:

— Քեզ ի՞նչ բարեկամ,— ասաց և ուժդին,  
Մահակը առած Դավիթն հարձակվեց,  
— Քո վերջին ժամն է, ո՛ր, յես իմ հողին,—  
Ասաց ու դայլն դեռին տապալեց:

— Քաջասիրտ տղա, ապրես, ապրես դու,  
Յեղիր անդիջում քո հողով արի,—  
Տերերի կամքին մի յեղիր հլու,—  
Ասաց արծիվն այն, իմաստուն, բարի:

Ու Դավիթը մեր, դայլին սպանեց,  
Ու փորը ճեղքեց, վոսկե տուփն հանեց,—  
Տուփից դուրս յեկան մի ձուկ ու մի ձի,  
Ժպտաց Դավիթը ու տուն շտապեց:

Համբուրեց վորդուն հայրը ալեհեր,  
Իր յերջանկության ու բախտի համար,—  
Սպրեցին նրանք աշուն ու ձմեռ,  
Յերջանկությունն այդ շտեմեց յերկար:

Ու քյոխվեն դյուղի պարտքի տեղ առավ,  
Տարավ նժույգը Սաչոյից ծերուկ,—  
Ու նրանց կյանքը նորից վատացավ,  
Ի՞նչ աներ ծերը, ո՞ւմ դիմեր և ո՞ւր:

— Չուով չի, վորդի, բախտը չի ժպտում,  
Քյասիր ենք ճիշտ ել, եղպես կմնանք,—  
Յեղբայրներիցդ ձայն ել չի լսվում,  
Սովահար յեղան դուցե և նրանք:

— Հինդ շահի պարտք ես, ինչ ունես դե տուր,  
Վոչ վերջ կա պարտքին, վոչ խիղճ, վոչ հողի,—  
Վոչ ել դատաստան ո՞ւմ դիմես և ո՞ւր,  
Ուժի տեր ե նա, ով ունի վոսկի:

— Այ հեր, կզնամ նորից արծիվ մոտ,  
Կպատմեմ նրան, բարբը ինչ կա,—  
Վորդին համբուրեց ալեհեր իր հոր  
Յեզիլ ընկավ ճամբա, պայծառ, արեկա:

Դավիթը տեսավ վոսկի արծիվին,  
Պատմեց բոլորը, պատմեց ամեն ինչ,  
— Կարողութունն իմ արեցին ցրելվ,  
Իմաստուն արծիվ, ճամբա ցույց տուր ինձ:

— Լավ,— ասաց նորից արծիվը նրան,  
Հեռ դարձիր յեկած քո ճամբով հիմա,—  
Կհանդիպի քեզ աղվեսը այն չար,—  
Կսպանես նրան, աղվեսին հիմար:

— Գնա և հասիր քո յեղբայրներին,—  
Յերեկ գնացին նրանք միասին,—  
Գնա և հասիր դու նրանց, Դավիթ,—  
Յեվ դուք կսպանեք խարդախ աղվեսին:

— Վորտեղ սպանեք, կդանեք այնտեղ  
Լուսավոր մի կյանք ու յերջանկութուն,—  
Կյանքը կլինի քաղցր, փառահեղ,—  
Հեռ դարձիր հիմա, յերջանիկ ես դու:

Դավիթը դարձավ մահակը ուսին,  
Գնաց ու դնաց խորքում անտառի,—  
Նա դտավ յերկու իր յեղբայրներին,—  
Վոր նստել էյին սավերում ծառի:

— Դավիթը,— ասին յեղբայրները իր,  
Ու նրան գրկած պինդ համբուրեցին,—  
— Եդ վոնց եղավ, վոր դու եսքան հեռու  
Անտառի խորքում մեզ հանդիպեցիր:

— Իմաստուն արծիվն ինձ ասաց դնա,  
Ու միացիր դու քո յեղբայրներին,—  
Ու յերբ աղվեսը,— շարունակեց նա,—  
Կհանդիպի ձեզ, սպանեք չարին:

Յեղբայրներն յերան ու բնկան ճամբա,  
Գնացին յերկար, իսկ աղվեսին դեռ  
Մէյին հանդիպել,— ու այդպես անցան,  
Կտրեցին նորից անտառ ու դաշտեր:

Մոտենում էյին հայրենի դյուղին,  
Տեսավ Դավիթը, վոր ահա, հեռվից  
Աղվեսն եր դալիս լուռ, դադտագողի,  
Դունչը քսելով ինչ վոր մի քարի:

— Ճիշտ է, աղվեսն է, պատրաստվիր, Դավիթ,  
Մեձ յեղբայրն ասաց ու մահակն առավ,—  
— Աջ կողմից անցիր ու ճամբան կտրիր—  
Յեղբայր Դավիթը պատասխան տվավ:

— Սպասեք, տղերք, դեռ մի քանի բառ  
Ասելիք ունեմ ձեզ պես քաջերին,—  
Ասաց աղվեսը խորամանկ ու չար,—  
Ուղեց, վոր խաբի քաջ յեղբայրներին:

— Չխարվէք, տղերք, զարկեցէք դրան,  
Ասաց արծիւը ու իջավ նա ցած,—  
Յերեք յեղբայրներ խփեցին նրան,  
Աղվեսը ընկավ նրանց դեմ դիմաց:

— Ապրեք, տղաներ, քաջ յեղէք կյանքում,  
Անդիջում յեղէք ու սրտով արի,  
Զարկէք թշնամուն չար ու արնախում  
Զենքները կյանքի չհանձնէք չարի:

Իմաստուն արծիւին ասաց ու թռավ,  
Դեպի արեւը, աչքը յերկնքի,—  
Իսկ յեղբայրները յերեքն էլ դառան  
Գյուղը հայրենի, այնքան թանկագին:

Դարձան նրանք գյուղ, ինչ գարմանք, հրաշք,  
Չճանաչեցին գյուղը հայրենի,—  
Հին գյուղի տեղը, կանգնել էր չքնաղ  
Նոր գյուղ լուսավոր պայծառ արեւից:

Լավ ու գեղեցիկ տներ սպիտակ  
Բարձրացել էին ու յերկինք հասել,—  
Ամբարների մեջ ցորեն վոսկեհատ,  
Գոմեր լուսավոր ու տներ լուսե:

Ու ամեն սրտից մի խոսք էր հնչում,  
Յեւ ծորում էին հնչյուններ յերգի,  
«Մեծ Ստալինի կուխողին վողջույն,  
Վոր տալիս է մեզ կյանք, արեւ անդին»:

Սյուպես արեցին վորդիք դասըացի,  
Սպանին արջին— ցարին զաղբելի  
Ու կարվածատեր պառաված դայլին,  
Խորամանկ աղվես խարդախ կուլակին:

Յեւ սպանեցին թշնամուն ընդմիջտ,  
Գտան անսահման յերջանիկ մի բախտ,—  
Յրեցին նրանք թե թախիծ, թե վիշտ,  
Վե՛հ հայրենիքի սիրով անաղարտ:

Իսկ արծիւը այն իմաստուն ու վե՛հ,  
Վոր ճամբա տվեց չարքաչ գյուղացուն,  
Ստալինն է մեր առաջնորդը մեծ,  
Վոր մեր ազգերին կյանք, արեւ բերեց:

1938 թ. հունվար  
Յերևան



## Ն Ե Վ Ա Պ Ռ

(Իսպանական պոեմ)

Վիրավոր զինվոր՝ Ն Ե Վ ա Պ Ռ  
 Տ Ի Ե Բ Ե Ս Ը՝ յերբ նրան խրամասից դուրս  
 էլին բերում սանիտարական պահպարա-  
 կով, ցատկելով այսեղից ուսմբով Ես-  
 փից հանում է յերգու Ֆալստական ցանկ։  
 (Թերթերեց)

1

Համբուրեց մորը, համբուրեց կնոջն,  
 Համբուրեց իրա բալիկին փոքրիկ,—  
 — Մնացեք բարով,— դե՛ մնացեք վողջ,—  
 Շուտով հետ կգամ, սիրելի մայրիկ։

Ասաց Նեվադոն, դուրս յեկավ տանից,  
 Յերբ շողքն արեվի դեռ նոր եր ընկել  
 Մարերի կրծքին, ու բուրումնալից  
 Գարունն եր կանաչ սարերին իջել։

Ու հեծավ նա ձին,— սևաբաշն առույգ,  
 Թուով անտառով անցավ իր ճամբան,—  
 — Սլացի՛ր նժույգ, թուի՛ր թումբ, առո՛ւ,—  
 Բանակն հասցրու մեր իսպանական։

Ու կռվի մղեց սերն հայրենիքի  
 Ուժ տվեց նրան,— արյունը յեռաց  
 Յերակների մեջ, և՛ սրտով արի,  
 Յե՛վ արիարար նա կռիվ դնաց։

«Կյանքը հոսուե՞ ե դետի պես վարար,—  
 Ու հետ չի դառնա հոսող ջրի պես,  
 Պետք է վոր լինել կյանքում միշտ համառ—  
 Ու սիրտը պահել վառ ծաղկահանդես»։

Մտորում եր նա, Նեվադոն արի,—  
 Գնում կռվի դաշտ ընկերներով իր,—  
 Նրանց / դեմ առու— հողեր անբերրի  
 Յեվ մաքուր զվարթ յերկինքը անծիր։

Ու յերբ յերեկոն իջավ ծանրաթեփ,  
 Ասողերը կապույտ յերկնքին թառան—  
 Հանգստանում եր վողջ գունդը արդեն  
 Դաշտում անվրան։

2

Յեվ հորիզոնը նոր եր ներկվել  
 Արևի պայծառ գունյնով բրոնզի,—  
 Զինջ լուսաբացը դեռ նոր եր բացել  
 Յերկնքի կապույտ վարազույրը սև։

Լուսաբացը վառ փայլող աչքի պես,  
 Շողում է՛ր, լողում,— արևի գունյնից,—  
 Պարտիզանների սրտերն էլ կարծես  
 Ինչպես առավոտ բացվեցին լույսից։

— Ձծլկեք, տղերք— չըլինի փախչեք,  
 Մակ ու ծուկ մտնեք,— կատակեց նորից  
 Կոմիսար Խողեն,— ծիծաղը հնչեց  
 Ինչպես կարկաչող առվակը սարից:

— Ո՛, վոչ, կոմիսար, սա կատակ հո՛ չե,—  
 Յեկել ենք կռիվ Մաղբիդի համար,  
 Կռվից փախչելը յերբեք վայել չե՛,  
 Թեկուզ և տեղան զնդակներ վարար:

Կատակում եյին զինվորները քաջ—  
 Կոմիսարի հետ, վորի սիրտը պարզ  
 Ովկիան եր մաքուր,— ինքը քաջալանջ,  
 Հասակով պարթեվ, աչքերով միշտ վառ:

## 3

Պայթեց մի թեժ ումբ և փոշու մի ամպ  
 Յերկինքը ծածկեց— հողը դղրդաց,—  
 Այդ թշնամին եր դառ խնդությամբ—  
 Համազարկ տվեց խոր դարան մտած:

— Կրա՛կ,— վորոտաց քաջասիրտ Խողեն,  
 — Կրա՛կ,— կրկնեց իր հրամանը հատու,—  
 Պայթեցին ուժգին արկ ու հրազեն  
 Փոշու ամպն ելավ այն կռվի դաշտում:

Ու մի թմբի տակ Նեվադոն մտած  
 Դեռ չեր կրակում,— սպասում եր վոր—  
 Թշնամին իրեն մոտենա, հանկարծ  
 Հնձի նա արաղ, ինչպես մի հնձվոր:

Պարտիզանական մարտիկներն անխոնջ  
 Կրակ են թափում թշնամու վրա,—  
 Ու Փաշխատական նենդ զորքերը վողջ  
 Նահանջում են յետ ու թողնում խրամ:

Մեխում են նրանք թշնամու սրտում  
 Գնդակներ անթիվ,— առնում հրազեն,—  
 Հաղթական յերգով մի անտառ մտնում,  
 Վորտեղ խոսում է կոմիսար Խողեն:

— Մաղբիդը մերն է, ու մեզ կմնա,  
 Պետք է, վոր լարել և՛ ուժ և՛ թե կամք,—  
 Ինչքան թշնամին դիրքումն ամրանա  
 Պետք է ջախջախել, լինել ամրակամ:

— Յերգում եք տվել դուք ժողովրդին  
 Հայրենիքը մեր պաշտպանել,— լինենք  
 Մեր հայրենիքի հարազատ վորդին—  
 Ու մեր դիրքերից հետ չնահանջենք:

— Այո՛, կոմիսար, դու մեզ հավատա,  
 Մահի դեմ մահով կռիվ կզնանք,—  
 Մեր հայրենիքը վոչ վոքի չենք տա,—  
 Նեվադոն հուզվեց վոնց ծովի ծփանք:

## 4

Գարնան դիչեր եր, խաղաղ, անվրդով,  
 Գնած եր զորքը, արթուն եր Խողեն,—  
 Յեւ չորս բուրբը նա աչք ածելով՝  
 Շրջում եր այդպես քաջասիրտ բազեն:

Քնած չեր մեկ ել Նեվադոն արի,  
Նա թինկ եր ավել մի ծառի բնի,—  
Յեվ սիրով լեցուն էր սիրաը բարի  
Հիշում եր ահա տունը հայրենի:

— Անուշ բալիկս քնած ե հիմա,  
Տեսնես հանդի՞ստ ե սիրաը իմ կնոջ,—  
Ի՞նչ ե մտածում իմ մայրը հիմա—  
Հաղթելուց հետո,— կգանե՞մ յես վողջ:

— Արդյոք հիշո՞ւմ ե թռչնիկն իմ անուշ,  
Հիշում ե արդյոք պարտիզան հորը,—  
Անդին իմ բալիկ— աչքերը քո նուշ  
Փայլում ե ինչպես մեր վաղվա օրը:

## 5

Ղուտինը դանդաղ ճեմում եր յերկնի  
Կապույտ պարտեզում, շուրջը բյուր աստղեր,  
Ասես ամեն աստղ մի ծաղիկ լինի,  
Վոր փուլում ե շուրջն և՛ բույր և՛ լույսեր:

Տնակում փոքրիկ հողե ու անշուք—  
Վարդազույն դեմքով քնքշազույն մի կին,—  
Իր ամուսնուն ե կարոտով հիշում,  
Գրկում էր փոքրիկ սևաչ մանուկին:

Նայում ե նա լուռ աստղերին յերկնի,—  
Ու տարվում լուսե յերագներով վառ,  
— Աստղը այդ փայլուն Նեվադոն ե իմ—  
Շչնջում ե նա կարոտով անմար:

Ու նա էր մանկան,— էր սրտի աստղին  
Որոցքն ե դնում,— վոր հանդստանա  
Համբուրում հետո էր շուշան տղին  
Վոր մուշ քնել եր, հանգիստ եր ահա:

Վերցնում ե թերթը,— դրված ե այնտեղ—  
Վոր ամուսինն էր՝ Նեվադոն ջահել,—  
Կուլում կատաղի յեղել ե ահեղ—  
Ու դիրքից իրա հետ չի նահանջել:

Յեվ գնդացիբով կրակ ե մաղել  
Թշնամու գլխին— անձրեվից վարար,—  
Իսկ յերեկոյան Խոզեն ե կանչել  
Ժպիտով պայծառ ու աչքերով վառ:

— Ապրես, Նեվադո, ռադմիկ հաղթական,  
Փռեցիր նրանց դեռի յեղերքին,—  
Կարծես տեղահան ծառեր վայր ընկան,  
Դու լավ ջարդեցիր թշնամու զորքին:

Կարդալուց հետո ժպտաց նա խորին  
Ու կարգաց կրկին ու կրկին անդամ,—  
— Մեծացիր, բալիկ, վոր դու ել արի  
Քո հորը նման լինես ամրակամ:

## 6

Բոցը ծառերը լիզում եր արագ,  
Անտառում ծուխը բռնել եր չորս կողմ,—  
Թշնամին վերից բացել եր կրակ,—  
Դղրդում էյին և՛ անտառ և՛ հող:



Սեւ ծուխը ասես գիշերվա նման  
Անտառն եր առել էր թևերի տակ,—  
Մի կողմը կրակ է հնոց վառման—  
Գնդակի վրո՞նց ու նորից կրակ:

— Գրո՛հ,— վորոտաց խոզեն այդ պահին,  
Ու ծխի տակից ահա անվարան  
Պարտիզանական մարտիկներն անահ  
Շարժվեցին առաջ— հեղեղի նման:

Նեվադոյի հետ խոզեն անբաժան,  
Փորսող եր տալիս ծառերի տակից,—  
Իսկ թեժ գնդակը վրո՞նում եր դաժան,—  
Անտառն այրվում եր ահեղ կրակից:

— Գրո՛հ— վորոտաց, կայծակ եր ասես  
Խոզեն այդ ժամին, ու թռավ առաջ,—  
Նրա հետեվից բաղենների պես  
Զորքերը յելան հաղթ ու քաջալանջ:

Սահայն այդ պահին մի գնդակ շաչեց,  
Տապալեց դետին Նեվադոյին քաջ,—  
Դետի յեղերքին արյունը հոսեց—  
Նեվադոն քաչեց մի խորը հառաչ:

Յեւ նա պառկած եր,— իր կողքին ումբն եր—  
Նա դեռ տնքում եր վարդապույն վերքից,—  
Ու շնչում եր,— իմ քաջ յեղբայրներ,  
Մաղբիղի համար տվեք ձեր հողին:

Յեւ տանում էյին գլուխները վար,—  
Պատգարակ դրած քաջ Նեվադոյին,—  
Ու տանում էյին յերկու սանիտար,  
Յերկինքն եր նայում նրա աչքերին:

Ու պատգարակից Նեվադոն տեսավ,  
Վոր նենդ թշնամին տանկեր է բերում,—  
Ու նա լուսթյամբ իր տեղից յելավ  
Սրաի մեջ անզուսպ ցասումն եր յեռում:

Պոկելով ահա ումբներն իր կողքի,  
Նետեց նա արագ, թշնամու տանկին,—  
Յերկրորդը նետեց այլեւի ուժգին  
Յեւ այդ տանկերին նա դամեց դետնին:

Նետեց և ընկավ ուժասպառ հողին,  
Սիրտը հեւում եր— թռչում եր ասես,—  
Դետի բանակը,— կովի դաշտ կրկին,—  
Կոմիսարն անխոնջ, դետի քաջ խոզեն:

Լուրը քաջության թև առավ թռավ,—  
Մինչև կովի դաշտ ու մինչև խոզեն,—  
Նրա անունը— մի զրույց դառավ,  
Ասին, դուկեցին ու դեռ կըխոսեն:



## Մ Ո Ն Ր Ա Գ Ո Ւ Յ Տ Ի Վ Ա Ր Գ Ը

(Արեվելյան ավանդակեպ)

1

Պալատում չքնաղ ապրում եր քնքուշ,  
Գեղերան, նազուն շուշան մի աղջիկ,—  
Ու միշտ կարոտով ու սիրով անուշ—  
Ծաղիկ եր փնջում— վարդեր գեղեցիկ:

Ու նա սիրում եր ջահել մի տղի,  
Հովիվ եր տղան՝ լեռների արքա,—  
Սիրում եր սարեր՝ ջրերով հղի,—  
Ձորերն եր սիրում ջինջ ու արեվկա:

Շվի յեր ածում կանաչների մեջ,  
Ձայնի տակ նրա յերգում եյին միշտ,—  
Քարը և հողը, ծաղիկները պերճ,  
Առուն կարկաչուն դուլալ ու անվիշտ:

Տղան յերգում եր սերը աղջկա,  
Սերը իր սրտի անկեղծ ու անբիծ,—  
Ու նրա պայծառ դեմքին արևկա—  
Ժպիտն եր խալտում անամպ—անթախիծ:

«Աղջի, սիրտս հանեցիր  
Քո կրծքի տակ դրեցիր,  
Քո կրծքի տակ դրեցիր,—  
Լեզուս, յերգս փակեցիր:

Այս ի՞նչ անեմ, աղջիկ նուշ,  
Շաքար աղջիկ վարդե թուշ,  
Ձուլալ աղջիկ վարդե թուշ,—  
Թռի՛ր, արի՛, թառլան դուշ:

Հայրդ անգութ ե ու չար  
Քեզ ինձ լայաղ չի անի,—  
Քեզ ինձ լայաղ չի անի—  
Կաքալ թռչուն, արի վար:

Յես մի հովիվ դառնարած,  
Դու վանդակում փակված դուշ,  
Դու վանդակում փակված դուշ—  
Սրտիս շուշան կարոտած»:

Յեղեգնյա չվին կարկաչում եր ղիլ,  
Թափում յերկու սեր շուրթերից իրա,—  
Կյանք եյին առնում յերգից ծառ ու ծիլ,  
Վարդը բացվում եր սարերի վրա:

Ու յերբ լռում եր ձայնը չվիի,  
Յերդ եյին ասում ծաղիկները դառ,  
Հնչում եր արծաթ ծիծաղը առվի—  
Ձմրուխտ դաշտերի դրկի մեջ պայծառ:

«Աղջի, սիրածդ տղեն  
 Ձինարի պես բոյ ունի,—  
 Ձինարի պես բոյ ունի,—  
 Աչքերով սև են տղեն»:

Վոսկե քյանքուլ ծամ ունի  
 Ձահել ջիվան են տղեն,  
 Ձահել ջիվան են տղեն—  
 Ձմրուխտ սարի համ ունի:

Աղջի, տեսանք յերազում,  
 Տղեն քեզ շատ է սիրում—  
 Տղեն քեզ շատ է սաղում—  
 Բոլորը եդ են ասում»:

Հոսում էր յերզը սարերից չքնաղ,  
 Դեպի պալատը— սիրտը աղջկա,—  
 Ու աղջիկն առած կրծքով լի ծիծաղ—  
 Այրվում էր սիրուց: Ձեռքում ճար չկա:

Տղան սիրում էր մարալ աղջկան,  
 Աղջիկն էր սիրում պարթեվ տղային,—  
 Այդպես ապրում են սիրով արեվկա—  
 Աչքերից հեռու անդութ աղայի:

## 2

Սակայն դադտնիքը չմնաց յերկար,  
 Աղջկա սերը հայրը իմացավ,—  
 Ու հոր պատվերով բերին ցեխ ու քար,  
 Ու աշտարակը ծանր բարձրացավ:

Հայրը աղջկան տարավ աշտարակ,  
 — Լեզուդ կկտրեմ, վոր նրան սիրես,—  
 Սերդ կհանեմ դնեմ վոտքիս տակ,  
 Մռայլ եր հայրը թանձր ամպի պես:

Սակայն հոսեցին որերը անխոս,  
 Նորից թնդում էր յերզը հովիվի,—  
 Նորից յերզում էր աղջիկը ու խոր  
 Ականջ էր դնում յերգին շվիլի:

«Շաքար ու նուշ ես անուշ,  
 Հոնքերդ սև սաթի պես,  
 Այտերդ վարդ են քնքուշ—  
 Դեմքդ կլոր լուսնի պես»:

Խոպոպ մագերդ գիշեր,  
 Աչքերդ ծով, գուլալ ծով,  
 Քո սերն ինձ շատ է դերել—  
 Ինչ կլինի դաս իմ քով»:

Նորից իմացավ հայրը աղջկա,  
 Սերը աղջկա— նրա սիրածին,  
 — Ցած բերեք նրան արևս վկա—  
 Շան թիքս անեմ անամոթ քածին:

Աղջիկը յեկավ և ուռենու պես  
 Գլուխը թեքեց իր հոր առաջին,—  
 Յեվ հենց այդ պահին պալատին ասես—  
 Սև ամպերն իջան ծանր ու անազին:

## 3

— Տարե՛ք աշտարակ— հարամ՝ կաթնակե՛ր ,  
Շան քածին վառեք աշտարակի մեջ,—  
Ձեմ ուզում լինել յես դրան վո՛չ հեր ,  
Վո՛չ ել անունը իմ պալատում պերճ :

Հրամանն ահեղ եր , անսիրտ , անդուլթ հոր ,  
Ով վոր դեմ լիներ , դեմ եր իր կյանքին,—  
Ու միայն նրա մայրն եր սգավոր  
Լալիս , ծվատում շորերը հագի :

## 4

Կայծեր ու կրակ : Բոցեղեն լեղվով  
Վառվում եր մի սիրտ ու մի սեր անգին,—  
Լավում եր ներսից տխուր հառաչով  
— Ոգնե՛ք , վառվում եմ , ա՛խ անդուլթ մարդիկ :

Մոխրացավ ամբողջ աշտարակը վես ,  
Մոխրացավ մի սիրտ — ջահել մի աղջիկ,—  
Սերը սավառնող վոսկե արծվի պես—  
Դեռ սավառնում եր անուշիկ ու հեղ :

Ու յերբ գիշերը իջավ ծանրանիստ ,  
Քաղաքի վրա— դաշտերին բոլոր,—  
Սև մոխրակույտին մոտեցավ մի սիրտ ,  
Գիշեր աչքերով ծանր ու մորտ :

Գիշերվա ժամին : Անդորր ու լռին ,  
Հնչեց շվրի յերգը դյուլթական,—  
Այդ հովվի սերն եր , վոր այդ վեհ պահին  
Դեռ սավառնում եր մեղմ ու քաղցրաճայն :

Հովիվն եր յերգում : Սերը աղջկա—  
Սերը իր սրտի անարատ ու ջերմ,—  
Բայց ախոսս , ախոսս , աղջիկը չկար ,  
Վոր կարոտով վառ սիրով տնկնդրեր :

Բայց մոխրակույտը լույս առավ հանկարծ ,  
Կարծես արևն եր այնտեղից ծագում,—  
Լուեց նվազը — իսկ սղան կանդնած  
Դեռ լուռ նայում եր,— սիրտը իր յերգում :

Ու մոխրակույտից թե առավ ասես ,  
Կարմրաթերթ մի վարդ արցունքով ցողված ,  
— Սիրտն ե՛մ աղջկա,— ու դիմեց այսպես  
Ֆեղդեղուն ձայնով վարդը այդ բացված :

— Իմ սիրտն է քաղիլ,— սարերի՛ արքա,—  
Իմ սե՛րն է վարդի թերթերում արված ,  
Քաղի՛ր , տե՛ս այնտեղ լույս ու արև կա—  
Քս անուշ սիրով լուսեղեն ցողված :

\*\*\*

Յեվ ամեն գիշեր , միևնույն պահին ,  
Գալիս եր սղան վարդին կարոտած,—  
Նվազում եր նա , յերգում սրտալի ,  
Մինչև նոր օրվա պայծառ ալբաբաց :



## Գ Ա Վ Ի Թ Ն Ե Ր

## Մ Ե Ր Դ Ա Վ Ի Թ Ն Ե Ր Ը

1.

Դավիթն հեծավ հրեղեն ձին.  
Բազուկներում ուժն առյուծի,  
Շողաց ձեռքում թուր կեծակին—  
Ու դռփելով հող ու դեպին,—  
Թռավ առաջ ու հողմաթև  
Կանդնեց հպարտ—  
Մարա Մելքի աչքի առջև:

2.

Մելիքն առած դենք ու զրահ,  
Վոր կարծում էր իրեն անմահ—  
Հավաքել էր զորքեր հաղար  
Բերել լցրել էր Սասմա սար:  
Մելիքն ելած Սասունի դեմ  
Ուզում էր վոր Սասուն քանդեր:

Ու գում էր նա ժողովրդին  
Ջարդել,  
Փչրել,  
Փռել չորս դին,

Խլել նրանց հողը,  
Վռակին—  
Քամել նրանց ուժը բաղկի,  
Ու հպատակ անել իրեն—  
Ժողովրդի ըմբոստ վողին:

Ժողովուրդը վոր տեսել էր  
Փոթորկաբեր  
Ավերումներ,  
Ու հայրենի հողը բերրի  
Վտոքերի տակ ոտարների,  
Չհանդուրժեց լուծն ոտարի—  
Վտոքի յեկավ դոռ պայքարի:

Ծնվեց հզոր դյուցազնը մեծ  
Կռիվներում այդ հողմամեծ,  
Յեկ հողում իր  
Ու սրտի մեջ  
Ժողովրդի սերը անշեջ  
Պահեց մաքուր, ու հեռ նրանց  
Ուժը հեղեղ— թափը անսահմ—  
Հյուսեց,  
Չուլեց—  
Հողումն իրա,  
Կռիվ հանեց տերերի դեմ:

Ըմբոստությունն իրենց հողում,  
Թև էր առնում ու փոթորկվում:

Ու Մեղիքը փողի զոռով,  
 Զորք եր քաշել սրով,  
 Թ՛րով,  
 Ուժի զոռով,  
 Կովի զոռով:  
 Կարծում եր, վոր ինքն ե հզոր՝  
 Կաննի Սասուն ուզած մի որ:  
 Սակաջն հերոս ժողովրդի  
 Միշտ հարազատ,  
 Անպարտ վորդին,  
 Սասնա դյուցազն  
 Դավիթը քաջ—  
 Հեծած իր ձին սուրաց առաջ:

— Ի՞նչ ես ուզում ժողովրդից,  
 Բավական ե քո զարկերից—  
 Փովեն գետին—  
 Մնան հողին,  
 Վոր դու լինես տե՛րը հողի:

— Ի՞նչ ես յեկել դու Սասնա սար,  
 Սասց Դավիթն— կանգնեց վոնց սաջ,  
 Վորի ուժը անհուն եր միշտ  
 Ու Արեին եր հավասար:

— Կո՞վ կուզես— կովի՛ արի,  
 Բավական ե հողը բերրի—  
 Վտաքերիդ տակ միշտ արորվի,  
 Վոնց յեկել ես  
 Դե՛ հեռ դարձիր,—

Թե չե կընկնես  
 Թուր կեծակից:

Ու ճիծաղեց Մեղիքը նեո.  
 — Կոյվ կուզեմ, զորքերդ բեր.  
 Մերկ ու սովածն ինչ կանի ինձ  
 Յեթե՛ չընկնեն հենց իմ ահից:

— Յես մենակ եմ յեխում քո դե՛մ...  
 Ժողովրդին յես չեմ բերի—  
 Դաչտն արյունի:

— Դուռոզ, հպարտ,  
 Դու կարծում ես մի՞շտ ես անպարտ:

Զարկեց Դավիթն,  
 Կանգնեց հպարտ...  
 Ու քաջ Դավիթ զարկից ահեղ,  
 Արյունն ելավ կապեց հեղեղ:  
 Ու մի զարկից Դավիթ պարթե  
 Կտրեց Մեղիի գլուխը սե:  
 Հրեչն ընկավ ժողովրդի  
 Զարկից ահեղ:  
 Նրա վորդին—  
 Դավիթը քաջ դարձավ զորքին—  
 — Հեռ գնացեք,  
 Հողին,  
 Հանդին,  
 Տեր կանգնենք ձեր հալալ հացին:

Այդ Դավթի ձայնն եր հրոտ  
Բացվեց ինչպես ջինջ առավոտ:

Դավիթն ինքը ժողովուրդն եր—  
Ժողովուրդը քաջ Դավիթն եր:

## 3

Հայրենիքն իմ ինչքան Դավիթ,  
Ինչքան, ինչքան ունի իդիթ:

Չկալովն Ե Դավիթը մեր,  
Գրոմովն Ե Դավիթը մեր,  
Բայդուկովն Ե Դավիթը մեր,  
Վորոնք ունեն զույգ աչք թրեր,  
Վորոնք հեծած շաչող ձիեր,—  
Նվաճեցին բեվեռը ցուրտ—  
Հայացքներով արեվասուր:

Ստախանով Դավիթը մեր,  
Ու Կրիվոնոս Դավիթը մեր,  
Յեվ Տրուևով Դավիթը մեր,  
Գաջ Դավթի պես միշտ աներեր:  
Ժողովուրդն Ե Դավիթը մեր,  
Մենք ենք, մենք ենք Դավիթը մեր,—  
Դավիթը մեր քաջ ու զորեղ—  
Թշնամու դեմ հաղթող, ահեղ:

## 4

Ապա փորձի թող թշնամին—  
Վոտքը դնի մեր սահմանին,

Ինչպես Դավիթ կենենք վոտքի,—  
Մեր ձեռքերում թուր կեծակին  
Կենենք զրոհ,  
Կտանք զրոհ,—  
Վորից Արև առաջնորդը—  
Կլինի դոհ:

## 5

Փա՛ռք դյուցազուն Դավթին Սամա,  
Վոր պիտի միշտ մնա անմահ:

Ժողովուրդը իր վառ սրտում—  
Պիտի պահի ջերմ ու խնդուն—  
Անունը այդ...

Ու դվարթուն—  
Մեր սարերի Դավիթների  
Գործերը վառ  
Պիտի շողան,  
Գալիք անմար նոր սերնդի,  
Ժողովրդի—  
Հողիներում ջերմ ու խնդուն:  
Իսկ թշնամին  
Պիտի դողա,  
Խորհրդային Հայրենիքի  
Դավիթների զարկից հատու:



Վ. Մ. Վ. Թ. Ի. Կ. Ռ. Ի. Վ. Բ.

Կայծակե ձին, հուր ու կրակ,  
 Հողը, ամուր վոտքերի տակ,  
 Ու ծամելով սանձն յերկաթի,  
 Մեջքին առած մանուկ Դավթին,  
 Ու թափելով—  
 Պնչերից իր կրակ ու հուր,  
 Գնաց հասավ—  
 Հորդ ու վարար պաղ Կաթնաղբյուր:  
 Դավիթն իջավ,  
 Ու սիրան առավ,  
 Ու ջուր խմեց նման կաթի,  
 Վոր ուժ տվեց յերկաթ Դավթին:  
 Ու հեռ յերավ,  
 Հեծավ իր ձին,  
 Կուրծքը նրա վոնց պղնձի  
 Վահանը կոփ,  
 Հուր ձին ել դոփ,  
 Քչեց դնա՛ց,  
 Գնաց առա՛ջ,  
 Իր հետևից թողնելով զիլ  
 Թինդ ու շառաչ:

Ու սարերից են ծիրանի՛  
 Յերզն եր հնչում աղջիկների,  
 Ու մի դուստն գլուխն արած

Ջրունոտ ձմեռ,  
 Չայնով ասաց.  
 — Կորիճ Դավիթ կուլի կերթա,  
 Վոր Մելիքին անի փրթան,  
 Վոր մեր պաղ-պաղ ջուրը մաքուր՝  
 Հոսի վարար վոնց Կաթնաղբյուր:  
 Դավիթը մեր կռիվ կերթա,  
 Հաղար բարս՛վ  
 Երթա—երթա:  
 Մեր դուստնին առած մեջտեղ,  
 Աղջիկների ձայնը համեղ,  
 Հնչեց նման աղբբրակի,  
 Վոր ծնվում է սարի տակից:  
 — Ախպե՛ր Դավիթ, կռիվ կերթաս,  
 Մեր սիրաը քեզ, վոսկի մի թաս  
 Յերբ ծարվընաս՝  
 Պաղ ջուր խմես ու կշտանաս:

Ու Դավիթը ծիծաղն առած  
 Իր շուրթերին՝ այսպես ասաց.  
 — Կերթամ կուլի,  
 Քույրե՛ր անդին,  
 Վոր սև հողի՛ն  
 Տամ Մելիքին:  
 Ու Դավթի ձին,  
 Թռավ առաջ, իսկ քաջ Դավթի  
 Բազուկներում կռի յերկաթի,  
 Կաթնաղբյուրի ջուրը յերած՝  
 Յերակներում յեռա՛ց,  
 Յեռա՛ց:



Նրա հեաքից վարդ աղջիկներ,  
Գուսանը ծեր,  
Նայում եյին  
Քաջ Դավիթին,—  
Նրա կայծակ հաղթ թուխքին:

— Գնաց Դավիթ մեր ապավեն,  
Վոր աղափ մեզ Մելիքեն,  
Դավիթ, դուրբան քո քաջ ձեռքին,  
Վոր կիբրթի՛ Մսրա դաժան  
Դեզ Մելիքին:  
Յերգում եյին աղջիկները  
Գուսանի հետ,  
Ու մանում են ձորից յեղնող—  
Նեղ արահետ:

Ու քաջ Դավթի արևադուն,  
Ծիրանի վառ հրեղեն ձին—  
Թռավ կանգնեց լեռ ու կիզուն  
Մասմա սարի ծիրան դլխին:  
Ու փայլեց շող  
Հաղարաջող  
Դավթի ձեռքի  
Թուր կեծակին:  
Իսկ Դավիթը—  
Կայծակնածին,  
Տեսավ յեղնող աստղերի ծին:  
Դիչերը զա՛րթ  
Ասողով հաղար,  
Իջել էր վար—

Սասնա սարին,  
Դավիթ սարին:  
Սակայն Դավթի ձին հրեղեն,  
Արձակում էր շող լուսեղեն,  
Թուրը նրա արև էր ջեռ,  
Վոր շողում էր,  
Վոր պիտի դեռ—  
Շողար, ցոլար,  
Իսկ Մելիքը պիտի դողար,  
Ընկներ դետին—  
Գլուխն հողին:

Յերբ առափոտն աչքը բացեց,  
Ու արևն իր շողքը դցեց—  
Սասնա սարի սեպ կատարին,  
Նորից թռավ մեր Դավիթը:  
Ու քաջ Դավթի պիբիկ-սանձակոծ,  
Կայծակ ու բոց,  
Ձին հրեղեն,  
Վառ-լուսեղեն,  
Թռավ առաջ  
Թինդ ու շառաչ  
Բռնե՛ց Սասնա սարին ծիրան,  
Մեր հաղթ Դավիթ նստած վրան:

Ու Դավիթը դոռաց ահեղ.  
— Յելե՛ք, կեցե՛ք,  
Ձի՛ թամբեցեք,  
Ձե՛նք կապեցեք,  
Ու ձի՛ հեծեք,

Մահ եմ բերել Մսրա Մեղքին,  
Պիտի առնեմ նրա հողին,  
Ասաց Դավիթն ասպանդակեց,  
Մսրա Մեղքի մեծ վրանի  
Առջև կանգնեց:

Մեղքն առած  
Քունը իրա յոթը սրվա,  
Ասաց.— Դավիթ,  
Դուս, Մասունի կտրիճ իգիթ,  
Նստիր,  
Լսիր,  
Հեռո խոսենք՝  
Հետս կովենք:

Գաջ Դավիթի ձին հրեղեն՝  
Բոց եր թափում իր աչքերեն,  
Ու յերբ Դավիթն իջնել ուղեց—  
Ձին խրրիւնջաց ու զիլ դոփեց:

— Ժամանակը կարճ է, Մեղք,  
Բավական է նստես, ելի:  
Կովի՛ ելի, թե չե կերթամ,  
Չորքիդ կանեմ կապ ու չորթան:

Յեւթի Մեղքն ու զիլ փչեց,  
Բայց Դավիթը մնաց—  
Կանգնեց:

— Առաջին դարկն ի՛մը կլնի,—  
Մեղքն ասաց արյունալի:

— Քո՛նը լինի,  
Վեր կաց կովի,—  
Դավիթն ասաց. նրա ձայնից  
Թնդաց սարը միանդամից:  
Մսրա Մեղքն իր դուրզն առավ,  
Յերեք հազար փութ եր քաշում,  
Ու ձին հեծավ,  
Գնաց հասավ  
Դիարբեքի,  
Ու հեռ դարձավ  
Զարկեց... ինքն ել կորավ փոշում:  
— Ե՛յ, հե՛յ, դնաց եդ հողածին  
Դավիթը մեր:  
— Կենդանի յեմ՝ առյուծածին,  
Մեկ ել արի:  
Ու Մեղքը թինդ ու տարալի  
Տարածելով՝ թուով Հալաբ,  
Ու հեռ դարձավ դարկեց կրկին,  
Մեր քաջ Դավիթն:  
— Կենդանի՛ յեմ ու հողածին,  
Մե՛կ ել արի,—  
Գոռաց աջից.  
Դավիթն երավ փոշու միջից:

Մեղքն հեծավ նորից իր ձին՝  
Գուրզը ձեռին.  
Գնաց Թափ հողը Մսրա,  
Ու հարձակեց Դավիթի վրա:  
— Կորա՛յ Դավիթը հողածին,  
Հեռն ել իր ձին:

— Կենդանի՛ յեմ յես՝ հողածին,  
Ասա, Մըսըր, ո՞ւմն ե հերթը:  
— Գո՛նն ե, Դավիթ,  
Սասնա իդիթ:

Ու Մելիքը փորեց մի հոր,  
Վոր շատ եր խոր,  
Ու իր վրան քաշեց քառսուն  
Ձաղացի քար—  
Սրտի մեջ ահ,  
Մահ ու սարսուռ,  
Քառասուն հատ դոմշի կաշի  
Վրան քաշեց,  
Վոր մեր Դավթի թուրը կայծակ՝  
Նրան չըտա մահ դժնդակ:

Ու մոնչաց Դավիթն ահեղ,  
Առյուծասիրտ,  
Առյուծ վորդին,  
Վոր զավակն եր ժողովրդի,  
Ու ձին խաղաց նրա տակին,  
Շողաց ձեռքում թուր կեծակին:  
— Ամա՛ն, Դավիթ, ինձ խնայի՛,—  
Ասաց մայրը Մելիքի նեռ,  
Ծեր,  
Արեհեր:  
Ու Դավիթը յերկրորդ անգամ  
Արեգական  
Թուրը քաշեց:  
— Վա՛յ, Դավիթ, վա՛յ,—

Մորա Մելքի քույրը կանչեց,—  
Մատա՛ղ լինեմ զո վոտքերին,  
Ես անդամ ել դու ինձ ների:

— Լավ, մոնչաց Դավիթը հաղթ  
Յես եմ անպարտ:  
Քաշեց թո՛ւրը յերրորդ անգամ,  
Կայծեր թռան թրի բերնից,  
Կայծեր թռան յերկինքն ի վեր—  
Դառան աստղեր,  
Ու այդ աստղեր վառ ու շողուն՝  
Ծնեց Դավթի թուրը կիզուն:

— Կենդանի՛ յեմ, զարկ, քա՛ջ Դավիթ:  
— Փափ տուր մի քեզ,  
Մելիք Մորա:  
Յեվ Մելիքը յեղավ ճիշտ կես...

Մելիքն ընկավ,  
Ու Մելիքի արյունն ելավ՝  
Կապեց դեատեր:  
Ու գորքերը նեռ Մելիքի—  
Դարձան Դավթի  
Սիրտն ու հողին:  
Ու դուստան մի—  
Ծեր,  
Վոնց ձմեռ,  
Յերգն իր հյուսեց,  
Ձուրեց սիրով,  
Դավթի բաղկի,

— Կենդանի՛ յեմ յես՝ հողածին,  
Ասա, Մըսըր, ո՞ւմն ե հերթը:  
— Քո՛նն ե, Դավիթ,  
Սասնա իդիթ:

Ու Մելիքը փորեց մի հոր,  
Վոր շատ եր խոր,  
Ու իր վրան քաշեց քառսուն  
Չաղացի քար—  
Սրտի մեջ ահ,  
Մահ ու սարսուռ,  
Բառասուն հատ դոմչի կաշի  
Վրան քաշեց,  
Վոր մեր Դավթի թուրը կայծակ՝  
Նրան չըտա մահ դժնդակ:

Ու մոնչաց Դավիթն ահեղ,  
Առյուծասիրտ,  
Առյուծ վորդին,  
Վոր զավակն եր ժողովրդի,  
Ու ձին խաղաց նրա տակին,  
Շողաց ձեռքում թուր կեծակին:  
— Ամա՛ն, Դավիթ, ինձ խնայի՛,—  
Ասաց մայրը Մելիքի նեռ,  
Ծեր,  
Ալեհեր:  
Ու Դավիթը յերկրօրդ անդամ  
Արեգական  
Թուրը քաշեց:  
— Վա՛յ, Դավիթ, վա՛յ,—

Մորա Մելքի քույրը կանչեց,—  
Մատա՛ղ լինեմ քո վոտքերին,  
Ես անդամ ել դու ինձ ների:

— Լավ, մոնչաց Դավիթը հաղթ  
Յես եմ անպարտ:  
Բաշեց թո՛ւրը յերրորդ անգամ,  
Կայծեր թռան թրի բերնից,  
Կայծեր թռան յերկինքն ի վեր—  
Դառան աստղեր,  
Ու այդ աստղեր վառ ու շողուն՝  
Ծնեց Դավթի թուրը կիզուն:

— Կենդանի՛ յեմ, զարկ, քա՛ջ Դավիթ:  
— Թափ տուր մի քեզ,  
Մելիք Մորա:  
Յե՛վ Մելիքը յեղավ ճիշտ կես... .

Մելիքն ընկավ,  
Ու Մելիքի արյունն ելավ՝  
Կապեց դետեր:  
Ու զորքերը նեռ Մելիքի—  
Դարձան Դավթի  
Սիրտն ու հողին:  
Ու զուսան մի—  
Ծեր,  
Վոնց ձմեռ,  
Յերզն իր հյուսեց,  
Չուլեց սիրով,  
Դավթի բաղկի,

Թուր կեծակի  
Ահեղ սիրով:

— Դառնանք, ջեղ դովենք,  
Դավիթ, մեր արև,  
Դու ելիր միայն—  
Տվիր մեզ բարև:  
Կյանքըդ յերկարի ու դառնա արև',  
Դավիթ, Սասնա սա՛ր,  
Աշխարհում չկա  
Քեզի հավասար:

Ու զորքերը թողած՝ զենքեր  
Ու թրեր,  
Յերգում ելին սիրաջեռ:  
— Դավիթ, արև՛ մեր աչքի,  
Մեզ ազատիր Մելիքից,  
Բացվեց գարնան առավոտ՝  
Դավթի թրեց կրակոտ,  
Թե Սասունա հո՛ղը մեր,  
Ու թե Մորա հողը մեր,  
Թող զո արև՛ը ծագի,  
Դավիթ, մեր սիրտ,  
Մեր հողի:

1938 թ.  
Յերեկան



Գ Ս Վ Պ Թ Ի Ս Ե Ր Ը

Վորասարից տուն դարձավ,  
Դավիթը քաջ ու պարթև—  
Վորսը դրեց իր առջև—  
Ու մռայլվե՛ց,  
Ու տիրե՛ց  
Տխրությունը: ծանր ու բիրտ,  
Դավթի անհուն սրտի մեջ:

Նրա անհուն սրտի մեջ  
Սիրո հրդեհը անշեջ—  
Տողեց կայծերը շողուն—  
Ու նա սիրով շատ հեռուն,  
Թռավ մտքի արծիվով  
Գեղեցկության անափ ծովն:  
Նրա դեմքին քաղցր ու պերճ,  
Խայտեց լուսե մի ժպիտ,  
Ու նա հիշեց մի վառ սիրտ  
Հիշեց Չմշեկը Սուլթան—  
Մոռացավ հոգս, ամեն բան:

Կուռ խորհում էր դեռ նստած,  
Անհաղթ ուժն իր առած,  
Ու յերբ հոգու ականջին  
Հասավ յերգի ձայնը ջինջ:

Թուր կեծակի  
Ահեղ սիրով:

— Դառնանք, քեզ դովենք,  
Դավիթ, մեր արև,  
Դու ելիր միայն—  
Տվիր մեզ բարև:  
Կյանքըդ յերկարի ու դառնա արև,  
Դավիթ, Սասնա սա՛ր,  
Աշխարհում չկա  
Քեզի հավասար:

Ու զորքերը թողած՝ զենքեր  
Ու թրեր,  
Յերգում ելին սիրա՛ջևո:  
— Դավիթ, արև՛ մեր աչքի,  
Մեզ ազատիր Մելիքից,  
Բացվեց դարնան տուփոտ՝  
Դավիթի թրից կրակոտ,  
Թե Սասունա հո՛ղը մեր,  
Ու թե Մորա հողը մեր,  
Թող քս արև՛ը ծագի,  
Դավիթ, մեր սիրտ,  
Մեր հողի:

1938 թ.  
Յերեվան



Կ Ա Վ Մ Թ Ի Ս Ե Ր Ը

Վորսասարից տուն դարձա՛յ,  
Դավիթը քաջ ու պարթև—  
Վորսը դրեց իր առջև—  
Ու մռայլվե՛ց,  
Ու տիրե՛ց  
Տիրությունը՝ ծանր ու բիրտ,  
Դավթի անհուն սրտի մեջ:

Նրա անհուն սրտի մեջ  
Սիրո հրդեհը անչեջ—  
Ցողեց կայծերը շողուն—  
Ու նա սիրով շատ հեռուն,  
Թռավ մտքի արծիվով  
Գեղեցկության անափ ծովն:  
Նրա դեմքին քաղցր ու պերճ,  
Խայտեց լուսե մի ժպիտ,  
Ու նա հիշեց մի վառ սիրտ  
Հիշեց Չմշիկը Սուլթան—  
Մոռացավ հոգս, ամեն բան:

Լուռ խորհում եր դեռ նստած,  
Անհաղթ ուժն իր առած,  
Ու յերբ հողու ահանջին  
Հասավ յերգի ճայնը ջինջ:

— Դավիթ, ենոր սիվտակուլթյուն  
 Կհարցնես,—  
 Սիվտակ է քան ձյունը գարնան,  
 Ենոր շարմաղ ծծերը դու  
 Կհարցնես,—  
 Նմանի վոնց նուռը ամուսն:

— Դավիթ, ենոր կակուղուլթյուն  
 Կհարցնես,—  
 Կակուղ է քանց բամբակ գզած,  
 Ենոր անուշ վարդ պոռչներն  
 Կհարցնես,—  
 Վոնց առտվա վարդը ցողված:

— Դավիթ, ենոր հոնքերը դու  
 Կհարցնես,—  
 Վոնց զալամ քար սև սաթ ընի,  
 Ենոր խաղող սև աչքերը  
 Կհարցնես,—  
 Վոնց վոր Վանա ծովը ըլի:

— Դավիթ, ենոր յերկար բոյը  
 Կհարցնես,—  
 Բանցր է քանց չինարը մեր,  
 Ենոր ճակտի լենուլթյունը  
 Կհարցնես,—  
 Նմանի վոնց լուսնի հերթուն:

— Դավիթ, ենոր անուշ դոշը  
 Կհարցնես,—

Բանցր է քանց մեր Սասնա սարն,  
 Ենոր բարակ մատները դու  
 Կհարցնես,—  
 Վոնց վարդ ըլի ճերմակ ու խառ:

Յերգում էյին գուսանները,  
 Ու խանդուլի գովքը անում,—  
 Յերգում էյին ջերմ սագերը,—  
 Ու մեր Դավիթի սերը առնում:

Ու Դավիթը յերգը լսեց,  
 Ասես սրտից սիրո գուլալ  
 Աղբյուր բղխեց,  
 Ու վեր յելավ շեմը իրանց—  
 Գուսաններին դարձավ ասաց՝  
 — Ձեր անուշիկ  
 Ձենին մեռնեմ,  
 Ձեր ձեռքերի—  
 Սաղին մեռնեմ,  
 Թե իմ սրտում  
 Կրակ կար հուր,  
 Փոխվեց, դարձավ  
 Պաղ կաթնաղբյուր:  
 Թե՛ իմ սիրտը—  
 Գիշեր եր սև,  
 Փոխվեց, դարձավ  
 Մի տաք արև:  
 Թե՛ իմ սիրտը—  
 Գիշեր եր մութ,  
 Դարձավ սիրո—

Մի լուսամուտ :  
Թե՛ իմ սիրտը—  
Գյուլ եր սիրով,  
Դարձավ սիրո—  
Անափ մի ծով :

— Ձե՛ր անուշիկ  
Ձենին մեռնեմ,  
Ձե՛ր ձեռքերի—  
Սազին մեռնեմ :  
Սիրաս պիտի  
Առնեմ ման դամ,  
Ման դամ, գտնեմ  
Եդ Խանդուլի—  
Վոր իմ սրտի,  
Սերը քամի :  
Ձե՛ր անուշիկ—  
Ձենին մեռնեմ,  
Ձե՛ր ձեռքերի  
Սազին մեռնեմ :

Դավիթն ասաց  
Ժպիտն առած—  
Ու մոտեցավ գուսանին ծեր .  
— Յես անհեր եմ, վորք ու անաեր,  
Վորս եմ բերել Սասնա սարի,—  
Տար իմ վորսը ու նվիրի—  
Խանդուլ Խաթուն իմ սիրածին,  
Յես կհեծնեմ կայծակ իմ ձին,  
Ու արծրվից թև փոխ առած,

Թռչեմ կրամ,— Դավիթն ասաց,  
Խանդուլ Խաթուն փահլեվանին  
Բերեմ անեմ արժանի կին :

Ու Դավիթ հեծավ իր ձին,  
Թռավ եդ ձին,—  
Կայծակնածին,  
Թռավ հասավ Խանդուլի հենց  
Պատուհանի առջ կանգնեց,  
Ու Խանդուլը նրան տեսավ,  
Ու սիրտ առավ,  
Ու թինդ առավ նրա հողին,  
Տեսավ ինչպես ձին կխաղա—  
Դավիթ տակին :  
Խանդուլ Խաթունն ուրախացավ,  
Սիրով կարմիր խնձորն առավ,  
Պատուհանից Դավիթին նետեց—  
Ու Դավիթը խնձորը եդ,—  
Բերնով բռնեց :

Ու Դավիթի ձին դարբասի մոտ,  
Ձիլ խրխնջաց,—  
Ցանեց շող կայծ,  
Ու Դավիթը ամուր նստած,  
Տեսավ քառսուն ձերմակ ձիեր,  
Դարբասի մոտ փահլեվաններ :  
— Ե՛յ, հե՛յ, չեղավ,—  
Փահլեվանի մեկը ասավ,  
— Եստեղ ենք մենք յոթը տարի,  
Ու Խանդուլի սիրո գերի—



Իսկ ինձորը Դավթին նետի,  
Շողգամակեր ծուռ լակոտին:

— Բարև ձեզ, քաջ փահլեվաններ,  
Դիմեց Դավթը քառասուն  
Փահլեվանին, — վորոնք սարսուռ  
Ու ահ առան Դավթի ձեռնից,  
Բարև տվին միանգամից.  
— Բարև՛ մեր քա՛ջ  
Դավթ ախպեր,  
Հողնած կլնես, —  
Նստիր հաց կեր:  
Ու Դավթը նստեց սեղան,  
Ու սեղանին գինին նռան. —  
Իսկ սուփրի տակ քառասուն թուր,  
Թշնամու դեմ սուր ու կտուր —  
Ու դաշտի պես լիքը մի թաս  
Գինի տվին՝  
— Խմի՛ր, Դավթ՛, վոր կչտանաս:

Ու գլուխը քաշեց գինին,  
Խմեց կենացն իր Խաթունի:

Մեկ ել լցրի՛ն,  
Մեկ ել տվի՛ն,  
Ուզում եյին, վոր Դավթի՛ն  
Հարբեցնեյին, —  
Ու կտրեյին կաղնին հսկա,  
Խափարեյին պատղը Սասմա:  
Բայց Դավթը թասն շուռ տալիս,

Ասաց, — տղերք, դուր չի գալիս,  
Յես խմում եմ, դուք էք նայում —  
Եդ չեմ սիրում,  
Խմենք հերթով —  
Ով վոր հարբի՝ ընկնի քնով:

Փահլեվաններն լցրին թասերն,  
Յոթը տարվա նռան գինին,  
Կուշտ խմեցին,  
Վորը ընկավ քնեց գետնին —  
Իսկ վորը դեռ հայհոյում է,  
Ու սպասում իր վոճիբին:  
Ու յերբ բոլորը հարբեցին,  
Ընկան գետին ու քնեցին,  
Դավթն ելավ վտտի վրա:  
— Կենա՛ցը թո՛ղ լինի՛ նրա,  
Իմ Խանդութի: —  
Ու շուռ տվեց գինին նռան,  
Ու հետ յեկավ կանգնեց դռան,  
Ու հետ դարձավ —  
Սուփրեն առավ,  
Իսկ սուփրի տակ քառասուն թուր,  
Թշնամու դեմ սուր ու կտուր:  
Դավթ ժողվեց թրերը եդ,  
Չարկեց ծնկան, փշուր արեց,  
Ու մի դռան հետև գցեց,  
— Պետք կգա ես —  
Իմ Ջալալին,  
Կուրբան ելնեմ նրա նալին:

Գիշերը զարդ  
 Ասողով հազար․  
 Իջել էր վար․  
 Լուսնյակն անուշ քունն յերեսին,  
 Ման ե գալիս աստղերի հետ միշտ միասին:  
 Դավիթն ելավ եդ ժամանակ,  
 Գնաց կանգնեց մի դռան տակ:  
 Ծեծեց դուռը,  
 Նրա ձենից,—  
 Հողը շարժվեց միանգամից:  
 — Բա՛ց դուռը, բա՛ց,  
 Յես եմ,— ասաց  
 Դավիթը քաջ են Սասնա:  
 Ու Խանդուլթը դուռը բացեց—  
 Ու նուան պես նա կամրեց,  
 — Ի՞նչ կա, Դավիթ,—  
 Սասունի ծուռ,  
 Իմ քաջ իդիթ:  
 — Քե՛զ մոտ եկա, անգին Խանդուլթ,  
 Սերդ քաջեց—  
 Ինձ քեզ բերեց:  
 Ու Դավիթը ժպտաց ուրախ,  
 — Խանդուլթ իմ, «ա՛խ»,  
 Ասաց Դավիթն  
 Ու համբուրեց—  
 Կարծես վարդից  
 Թերթեր քաղեց:

Բ Ա Լ Լ Ա Գ Ն Ե Ր

ՌԱՆՈՒՅԻ ԼՈՒԳՈՆՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1

Բիւ յերկնքի հորիզոնը շառագունել եր արդեն  
Արեգակը վառ շողերով խոնարհվում եր յերկնի դեմ :  
Մթությունը իր սավանը փռեց սև ու ընդարձակ, —  
Անտառները ու լեռները առավ իրա թևի տակ :  
Իջավ մութը ծածկեց գետին, ծածկեց անտառ ու  
արոտ, —

Ու այդ պահին դադարեցին և կրակոց, և վորոտ :  
Դադարեցին կռիվները, դաշտը անցավ հանգստի, —  
Զյունախառը բուքն եր վռոնում, քամում յերգը  
իր սրտի :

Միայն հեռվում աղմկում են մերկ սոսիներն անտառի,  
Պահակները լուռ շրջում են հսկում գորգին, շտաբին,  
Ու քաջարի մարտիկները լուռ, լսում են մեծ պետին :

2

Ու Կլիմի շուրջն հավաքված մարտիկները քաջարի,  
Վորոշում են հաղթանակի ու վեհ ուղին մարտերի :  
Քարտեզն ահա, վոր փռված է սավանի պես  
ընդարձակ, —

Լուռ գծում է Կլիմն, առնում թե թնդանոթ և  
թե տանկ :

Ով արծիվի աչքեր ունի, ով ծովի պես սիրտ ունեւր, --  
 Յե՛վ ով ունեւր հաղթանակի ու հայրենի անմար սեր:  
 Յե՛վ ում հողին կայծ եր առել հաղթ Կլիմից արե՛վկա:  
 Յեկե՛լ եյին ու հավաքվել կայարանը Վորոժբա:  
 Բերե՛լ եյին նրանք իրենց վահանի պես կուրծքը սեղ,  
 Վոր թշնամու լույսը մարեն, նրանց ցերեկն անեն սև:  
 Գիշեր ե կես: Բայց միտինս է կայարանում հողմածե՛ծ,  
 Ու միտինգում ամպրոպի պես Կլիմի ձայնը շահեց:  
 — «Լուգանցիներ իմ հայրենի, կայծակնաթե՛վ

արծիվներ,

Լուսաբացին կըզրոհենք, պետք ե լինել անվեհեր:  
 Ու պաշտպանել կյանքի զնով Գոնբասը մեր հայրենի,  
 Արնաշախաղ պետք ե անել չար թշնամուն վայրենի:  
 Խոսում եր նա, այն լուգանցին, այն բանվորը

հասարակ,

Վոր առել եր կովոզներին իրա ովկյան սրտի տակ:  
 Խոսում եր նա ու խոսքերը նրա՝ նման զնդակի, —  
 Պայթում եյին, ուժ ներշնչում կովոզների կուռ  
 կամքին:

Մարտիկները սրտերը բոց առնում նոր ուժ  
 ու նոր թափ, —  
 — Մենք չենք թողնի հայրենիքի վրա չօքի  
 վոչ մի ամպ:

Ու գիշերը թափահարեց սև թևերը և թռավ, —  
 Վորպես հսկա մի սև թռչուն անտառի խորքը մտավ:  
 Ջերկնի ծոցից արե՛վն ելավ առյուծաբաշ, հրեղեն,

Արար աշխարհ առավ իրա թևերի տակ լուսեղեն:  
 Վե՛հ լուգանցին իր դունդն առած արշավում եր  
 միշտ առաջ,

Իր յետեից զնում եյին մարտիկները նրա քաջ:  
 Թնդանոթն իր կոկորդից թափում եր դուրս  
 զնդակներ,

Մարտիկները ճամբան բացին, իրենց կրծքով  
 անվեհեր:

Հրացանները պայթում եյին, զնդակները շառաչում,  
 Ու զնդակի ամեն զարկից ծառերն եյին հառաչում:  
 Վե՛հ լուգանցու զորքերն ամեն վողջ ճամբաները  
 առան,

Վոր թշնամին ներս չխուժի ու չմտնի կայարան:

Բայց մի թևի մարտիկները չդիմացան մինչև վերջ,  
 Բիրտ թշնամին ուզում եր վոր նրանց խեղճի  
 արյան մեջ:

Հենց այդ թևի կովոզները բռնած ուղին նահանջի,  
 Թողած դիրքեր՝ փախչում եյին զնդակներից արճիճի:  
 Դյուցազնական Կլիմն ելավ, կանգնեց նրանց  
 դեմ ու դեմ,

— «Ո՞ւր եք փախչում, ճամբա բացում գերմանական  
 զորքի դեմ:

Պետք ե կովել ու չթողնել, վոր թշնամին կատաղի, —  
 Մեր վողջ յերկրի հնոցը վառ սև թե՛վերի տակ առնի:  
 Ասաց անհաղթն, հեռ դարձրեց հենց այդ թևը  
 անհանդիստ,

Վորոնք կարծես ուժ խմեցին նրա սրտից վեհանիստ:



— Հե՛, դրո՛հ, — դռաց կոմանդիրը քաջ :  
 — Կրակ, — վորոտաց այդ հսկա բազեն, —  
 Խթանեց ձիուն ու թռալ առաջ, —  
 Յե՛վ վորոտացին ամեն հրազեն :

## 2

Ու թռչում էյին զնդակներն արագ,  
 Խփվում թշնամուն հենց դիրքերի մոտ —  
 Կարմիր զորքերը դարձել են կրակ,  
 Անցնում են առաջ և քաջ և խրոխտ :

Կրակի լեզուն ծառերն է լիզում,  
 Չորս դին զնդակներ, — կրակոց ահեղ, —  
 Կարմիր զորքերը, վոնց հեղեղ հոսուն  
 Բոլոր դիրքերը առնում են այնտեղ :

Կոմանդիրն անցած գլուխը զնդի  
 Թռչում է ուժգին հրամայում, — առաջ, —  
 Ու զորքը կարմիր առնում է գոտին  
 Գնդակների տակ զիլ բազմաշառաց :

Ու նոսրանում է զորքը թշնամու  
 Փախչում են թողնում դիրքեր ու խրամ, —  
 Կարմիր ջոկերի կրակը հատու, —  
 Թշնամու գլխին թափվում է արագ :

Ու կոմանդիրը, այդ հերոսը քաջ,  
 Իր գունդը դարձրած մի սիրտ ու մի մարդ, —  
 Մարտիկներով իր հաղթ ու քաջալանջ  
 Իր բերտ թշնամուն գլորում էր վար :

## 3

Մի զնդակ շաչեց, — այնքան թեթ թունոտ,  
 Ու կոմանդիրի կրծքի մեջ մնաց, —  
 Ընկավ նա դետին, կրծքից արյունոտ  
 Մայիսյան կարմիր վարդեր յեղան բաց :

— Գրո՛հ, — վորոտաց կոմանդիրն ընկած,  
 — Առե՛ք նոր դիրքեր, և թռե՛ք առաջ, —  
 Ձեր սրտում հավատ, հաղթանակ, — ասաց  
 Աչքերը փակեց կոմանդիրը քաջ :



Մենք կատարեցինք հաղթ զորավարի,  
 Նրա ջերմ սրտի իղձ ու հրաման, —  
 — Հաղթանակեցինք մենք կամքով արի,  
 — Փառք քեզ, կոմանդիր, փառք հերոսական,

1938 թ.



ԲԱՆԼԱԿ ՊԱՊԻ ՅԵՎ ԻՎԱՆ ԹՈՌԻ  
ՄԱՍԻՆ

1

Վաթսունմեկ ամյա  
Ծեր պապը Կորոպ,—  
Թոռի հետ մեկտեղ  
Գնաց Պերեկոպ:  
Արծաթիկ ելին մազերը նրա,—  
Ձյունը նստել էր  
Ծեր գլխի վրա:

2

Գնաց ծեր պապը  
Իվան Թոռի հետ,—  
Կճկեցին անցան  
Սառցապատ մի գետ:  
Անցան ու մտան  
Մոտիկ մի անտառ,—  
Կճկվել էլին  
Ճրտից ճյուղ ու ծառ:

3

Տասնվեց տարու  
Պապի Թոռն Իվան,—  
— Մենք ո՞ւր ենք գնում,

Թոռն ասաց նրան:  
— Գնում ենք, Իվան,  
Ճրունդեյի մոտ,—  
Գնում ենք,— ասավ  
Մարտիկների մոտ:

4

Ու հասան նրանք  
Կարմիր շտաբին,—  
— Կարելի՞ յե մեզ  
Տեսնել ձեր պետին:  
Ասաց պապը ծեր  
Ձուսպ ու կրակոտ,—  
Փայլեցին նրա աչքերն արեվոտ:

5

Վերցրեցին նրանց  
Յերկու քաջ բազե,—  
Տարան ներս, շտաբ.  
— Ընկեր Ճրունդե,—  
Ձեզ մոտ է յեկել  
Պապը իր Թոռով,—  
Ասացին նրանք  
Հնչուն ծիծաղով:

6

— Վորտեղի՞ց, պապի,—  
Ինչո՞ւ յես յեկել,—

Խոսեց Յրոնդեն  
 Ու կարծես յերդեց :  
 — Պապին քեզ մատաղ  
 Գյուղից Ունիկա, —  
 Թոռիս հետ մեկտեղ  
 Յես կռիվ յեկա :

## 7

— Փոքր չե՞ թոռդ  
 Կռվելու համար, —  
 Ասաց Յրոնդեն  
 Բարեսրտաբար :  
 — Դեռ շուտ չե՞ թոռիդ  
 Կռվի դաշտ զրկել, —  
 Նայեց պատանուն  
 Քաղցր ծիծաղեց :  
 — Իհարկե շուտ չե  
 Ընկեր կոմիսար, —  
 Յեկել եմ այստեղ  
 Կռվելու համար :  
 Ինչո՞ւ յեմ փոքր  
 Կռվել եմ ուղում, —  
 Ասաց պատանին  
 Կանգնած իր տեղում :

## 8

Ծիծաղեց պետը,  
 Կոմիսարը քաջ, —

Նայեց պատանուն  
 Կանգնած իր առաջ :  
 — Յես տուն չեմ դառնա  
 Լսեցեք ինձ, պետ, —  
 Կռվի դաշտ կերթամ  
 Յես իմ պապի հետ :

## 9

— Ճիշտ ե, կոզնի ինձ  
 Ընկեր կոմիսար, —  
 Փամփուշտ կրերի  
 Կռվելու համար :  
 Հըրացան տվեք,  
 Ու սվիններ սուր, —  
 Ասաց ծեր պապը  
 Կամքով իր ամուր :

## 10

— Լավ, մենք առավոտ  
 Հարձակման կանցնենք, —  
 Հիմա հրացան, —  
 Փամփուշտ ստացեք :  
 Ասաց պետը քաջ  
 Նայեց նա ծերին, —  
 Ու հետո ժպտաց  
 Ժրաջան տղին :



11

Գնդացրորդ եր  
 Պապը Իվանի,—  
 Կրակում եր նա  
 Սիրով հայրենի:  
 Դիրքերը մտած  
 Կրակում եր նա,—  
 Դիպուկ, անվրեպ  
 Թշնամու վրա:

12

Տրա'... տա'... տա'... տա'...  
 Գնդացիրն իրա,—  
 Կրակում եր այդ  
 Պարտիզանն անաս:  
 Թեթ ու ահարկու  
 Պայթեց մի գնդակ,—  
 Ասես ծերը քաջ  
 Մնաց նրա տակ:

13

Արյունը հոսեց  
 Այտերով նրա,—  
 Իվանը վազեց  
 Ու թեքվեց վրան:  
 — Պապի, ա'յ պապի.—  
 Պատասխան չկար,—

Անչնչացել եր  
 Պապը դարձել քար:

14

Չկորցրեց իրան  
 Պատանին մեր քաջ,—  
 Ծերունուն թողեց,  
 Նա վաղեց առաջ:  
 Գնդացիրն առած  
 Կրակում եր նա,—  
 Պատանին մեր քաջ  
 Տասնվեց տարվա:

15

Հնձում եր արագ  
 Իվանը կարմիր,—  
 Ու բիրտ թշնամուն  
 Անում ցան ու ցիր:  
 Թշնամին զդաց  
 Ահը իր սրտում,—  
 Գնդակների տակ  
 Հետ եր նահանջում:

16

Թողեցին նրանք  
 Դիրքերը իրենց,—  
 Թշնամին այդ նենգ

Անտառ նահանջեց :  
 Դաշտերի վրա  
 Մթությունն իրա,—  
 Սալանն եր լիռում  
 Սեվ ու ընդարձակ :  
 Յերբ դադարեցին  
 Կրակոց, վորոտ,—  
 Ու հանդստացան,—  
 Յեվ դաշտ և արոտ :

Այդ քաջ տղային  
 Կանչեցին շտաբ,—  
 Ֆրունզեն ժպտաց  
 Պայծառ խնդությամբ :  
 — Ապրե՛ս դու, Իվան,—  
 Ֆրունզեն գրկեց,—  
 Իվանին կարմիր  
 Ու պինդ համբուրեց :

1937 թ.



ՌԱԿԱՎԱԿ ԿԻՐՈՎԻ ՅԵՎ ՀՐԵՏՍՆԱՎՈՐ  
 ԾԵՐՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ

1

Խոնավ խավարն եր դրսում իջել,  
 Քամին շրջում է Աստրախանով,  
 Չորրորդ գիշերն է, վոր չի քնել  
 Մեր կոմանդարը բոցակորով :

Ու նստել է նա, խորհում է դեռ  
 Գծում պլաններ նոր հարձակման,  
 Պոկրովսկին է հանում գնդեր—  
 Ուզում է մտնել նա Աստրախան :

Հանկարծ փոխվում է միտքը նրա,  
 Սովը շրջում է քաղաքով մեկ...  
 Մարդիկ ընկնում են շեմի վրա  
 Ու մահանում են սոված ու մերկ :

Չորրորդ գիշերն է : Նա չի՛ քնում,  
 Չի՛ հանգստանում վայրկյան անգամ,  
 Ու հաղթանակի սերը սրտում—  
 Նա դեռ նստել է հաստատակամ :

Գծում է, ջնջում, ապա նորից  
 Իր դեմ յեղնում են մարտերն արի

Ու մուժ գիշերը լույսի ահից  
Քաջվում է գիրկը անտառների:

Գիշերն անցնում է այնքան ծանր,  
Այդը դժվում է մտախուզում,  
Լույսի շիթերն են մեղմ ու հանգարս  
Սև պատերի հետ հանգիստ խաղում:

Իսկ նա նստել է: Մտքերի տակ  
Գծում է ուղին հաղթանակով,  
Բացվում է դուռը ու մի պահակ—  
Մտնում է ներս ու ասում սիրով—  
— Մեկն ուզում է ձեզ, ընկեր Կիրով:

Նա բարձրանում է տեղից արագ,  
— Խնդրեմ,— ասում է,— թողեք ներս գա,  
Մտնում է մեկը կարճահասակ—  
Յուզոտ փափախը գլխին դրած:

Նա մի բանվոր էր փականազործ  
Փախած գնդերից Պոկրովսկու,  
— Ընկեր կոմանդար, այս յերեկո  
Թշնամին կտա մի նոր գրոհ—  
Կրակ կբանա թեժ, ահարկու:

— Արդեն առել է յեկեղեցին,  
Իսկ նրա կողքին մի փոքրիկ սուն  
Շտաբն է նրանց, հինգ գնդացի  
Ամրացել են մեր թիկունքում:

— Լուրը տխուր է, ընկեր Կիրով,  
Նավահանգստում տաղնապ է խոր,  
Փականազործն է ասում սիրով,  
Նայում Կիրովին սիրով ու խոր:

Իսկ կոմանդարը հանգիստ է դեռ,  
Նա մոտենում է կարճ կազակին,—  
— Լուրը տխուր չէ,— լսիր, ընկեր,  
Մի լավ ջարդ կտանք յես իմ հոգին:

## 2

Շտաբի ներսում կարմիրների  
Լուռ են բոլորը: Լարված ու լուռ,  
Յեվ սպասում են կոմանդարի  
Խոսքին իմաստուն, վճռին կուռ:

Լուռ են բոլորը: Կիրովն յելավ—  
Ու ձայնը նրա հնչեց մեկ ել,  
— Ընկերներ, ահա մի նոր պլան—  
Թշնամու շտաբը պետք է քանդել:

— Նրանց շտաբը պետք է ցրել,  
Կարել դուրսը խոռվության,  
Լինել համառ միշտ ու ջախջախել  
Հենց այս, հենց այս յերեկոյան:

— Ճիշտ է,— վորոտաց մեկն անհամբեր,  
Իսկ չէ վոր մտաիկ չենքում նրա  
Յերեխաներ կան, մայրեր ու ծեր,  
Ինչպես կրակել նրանց վրա:

— Այո, չեն կարող, — չեն կրակի,  
Մեր ընտանիքի վրա կրակ  
Չեն կարող թափել, — գոչեց կրկին  
Յելավ մի կազակ — կանգնեց արագ:

— Ճիշտ է, չեն կարող, — Կիրովն ասաց,  
Պետք է կրակել ճիշտ շտաբին,  
Նրա աչքերում ասես շողաց  
Ղեկավարի մեծ լուսե հոգին:

— Իսկ ով կա ձեզնից դիպուկ կրակող,  
Շարունակեց նա հանդիստ սրտով —  
Ու նրա հայացքը թարմ ու դերող —  
Սահեց ջնքորեն նրանց դեմքով:

Փականադործը իր յերգեցիկ  
Չայնով վորոտաց, — ընկեր Կիրով,  
Մի ծերունի կա աստրախանցի  
Դիպուկ կրակող զնդացիրով:

— Մերունուն բերեք, — բերեք ինձ մոտ, —  
Ասաց Կիրովը մեղմ ու հանդիստ, —  
Ու նրա դեմքին լուս արեվոտ  
Խաղաց հաղթության սերը անգին:

Յ

Ու հրետանին է հանում բերդից  
Մեր կոմանդարը ծերունու հետ,  
— Կրցրես պապի — հենց մի գարկից —  
Բո գարկից հետո կգրոհենք:

Արդեն պատրաստ եր հրետանին,  
Ու լուռ նայում եր յեկեղեցուն,  
— Չվրիպես, պապի, — ասաց կրկին —  
Մեր կոմանդարը սիրով լեցուն:

Հրետանավորը զիւ ծիծաղեց,  
Հեռադիտակով նայեց կրկին,  
Յել տարածությունը արագ չափեց  
— Պատրաստ եմ, ընկեր, յես կրակի...

— Պատրաստ ես, պապի, — Կիրովն ասաց,  
Ու նայեց, նայեց նա շտաբին,  
Վորն ամպերով եր արդեն պատած,  
Դարձավ նա արագ, — կրա՛կ, պապի:

Ու թնդանոթը պայթեց ուժգին,  
Փոչու և ծխի ամպը յելավ,  
Ու նայեց Կիրովը լուռ ծերուկին —  
Յել արագությամբ իր ձին հեծավ:

Թուչում եր Կիրովը հեծած իր ձին,  
Դեպի շտաբը Պոկրովսկու,  
Նա թռավ, հասավ յեկեղեցին,  
Ուր կարմիր զորքն եր դեռ կրակում:

— Գրոհ, — վորոտաց Կիրովն անգին  
Ու սլացավ առաջ զնդակի պես,  
Յել շողաց թուրը նրա ձեռքին  
Փողփողաց լուսից գրոչն ինչպես:

Նրանց շտաբը: Բիրտ թշնամու  
Արդեն յեղել եր հողմացրիվ,  
Ձորքերը փախան Պոկրովսկու  
Ու անտառներում յեղան ցրիվ:

4

Գիշերն իջնում եր խոր սևաթույր,  
Շտաբի ներսում կարմիրների,  
Ձորսդին ծիծաղ եր ու խնդություն  
Բղխած մարտիկի սրտից արի:

Մտավ Կիրովը հանդիստ ու դո՛հ—  
Ու ինքն ել ժպտաց ընկերներին,  
Ու սերը հոսեց ուրախ յերգով,—  
Դեպի կոմսանդարը քաջ ու արի:

Ու մոտեցավ նա հրետանավոր  
Ծերունուն պարթև Աստրախանցի,  
Վոր դեռ ժպտում եր սիրով ու խոր  
Մարտիկների հետ այն առնացի:

— Ապրես, ա՛յ պապի՛, զարկդ բունեց  
Հերոս իսկական— սիրով յեցուն,—  
Կոչեց Կիրովը ու համբուրեց—  
Հրետանավոր ծեր Աստրախանցուն:



### ՎԵՐՋԵՐԳԻ ՓՈՆԱՐՅՆ



Ո՛ր, իմ հայրենիք դու արեվաչող,  
Ծոցումդ եմ ծնվել— զավակդ եմ անպարտ,—  
Ծծել եմ կաթը քո արծաթաչող—  
Մայր դու իմ անդին,— ջերմ ու հարազատ:

Տվել ես դու ինձ գրիչ ու բառեր  
Ու ծով սիրտ ասես,— աչքեր կապտալիճ,—  
Ու մի կյանք զվարթ ու արի ձեռքեր  
Յեվ բախտ վոսկեչող խնդությունով լի:

Ավելի թանկ բան, իմ յերկիր, արդեն  
Չունեմ քեզ տալու, իմ կյանքից բացի,—  
Յեվ իմ յերգերից, վոր պիտի պայթեն  
Գալիք մարտերում վորպես դնդացի:

1938 թ.



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

\* \* \* ----- 3

### Հայրենիքի լիրիկան

Յեւ	7
Նվեր	9
Իմ հողում	10
Յերգ յերեկոյան	11
Յերևան	12
Աշնանային	13
Աշնանային	15
Զմեռ	16
Գարնանային առափոտ	17
Աշուն	18
***	19
Սվինի յերգը	20
Արծիվ	21
Հպարտութիւն	22
Նոյեմբերյան առափոտ	23
Խնդութիւն	24
Բարի գալուստ հերոսներին	25
Յերիտասարդութիւն	27
Բնութիւն ձայնը	31
Նոյեմբերյան ծաղիկներ	34
Խիզախ ողբաչուններին	36
Վախու	38
Աստղ հնգաթեւ	39
Յերգ Թումանյանին	40
Նամակ բանաստեղծին	41
Պոետը	45

## Հսկաների հետ

Պոետ	46
Գործն և յես	47
Մաղիկներ	50
Շնորհավորը զո նոր տարին, առաջնորդ	51
Հսկայի մահը	54
***	55
***	56
Կալոս	57
Զբույց արծիվի հետ	59

## Յ եր գ եր

Յերգ առաջին	60
Յերգ յերկրորդ	61
Յերգ յերրորդ	62
Յերգ հինգերորդ	64
Յերգ չորրորդ	63
Յերգ վեցերորդ	65
Յերգ յոթերորդ	66
Յերգ ութերորդ	67
***	69
***	71
***	73
***	74
***	76
***	77
***	78
***	79
***	80
***	81
***	82

II. Գ Ո Մ Ե Ն Ե Ր

Իմաստուն արժիւլը	85
Նեվազո	100
Մոխրահուլասի վարդը	108

Գ ա Վ Ի Բ Ե Ն Ե Ր

Մեր Դավիթները	114
Դավթի կտիվը	120
Դավթի սերը	129

III. Բ Ա Լ Լ Ա Դ Ն Ե Ր

Բալլադ լուզանցիների մասին	139
Բալլադ հազթանակի և հերոս կոմանդիրի մասին	146
Բալլադ պապի և Իվան թոռի մասին	146
Բալլադ կիրովի և հրեռանեա ծերունու մասին	153
Վերջերգի փոխարեն	159

Պատ. խմբագիր՝ Գ. Սարյան  
 Տէխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան  
 Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան



Գլադիանի Լեազոր՝ Ե. — 2277 Հրատ. № 4815

Պատվեր 200 Տիբատ 3000

Թուղթ 72×105 Տպադր. 5 մամ.

Հանձնված է արտադրության 27 փետրվարի 1939 թ.

Մտորադրված է տպագրության համար 31 մարտի 1939 թ.



«Ազգային գրադարան»



NL0320980

21670